

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՓԻԼՍՈՓՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
PHILOSOPHY, PSYCHOLOGY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (22)

ԵՐԵՎԱՆ - 2017

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ.
ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. PHILOSOPHY, PSYCHOLOGY»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Ավանեսյան Հ. Մ., Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Բաղդասարյան Ա. Ս.,
Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Ջաքարյան Ս. Ա., Խաչատրյան Ն. Գ.,
Հարությունյան Է. Ա. (*պատասխ. խմբագիր*), Հովակիմյան Ա. Է. (*պատասխ.
քարտուղար*), Մանասյան Ա. Ս., Շահվերդյան Գ. Մ., Միմոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аванесян Г. М., Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Арутюнян Э. А.**
(*ответ. редактор*), **Багдасарян А. С., Гончар Н. А.** (*зам. главного редактора*),
Закарян С. А., Манасян А. С., Овакимян А. Э. (*ответ. секретарь*), **Симонян А. Г.,**
Хачатрян Н. Г., Шавердян Г. М.

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Avanesyan H. M., Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), **Baghdasaryan A. S.,**
Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*), **Harutyunyan E. A.** (*Managing Editor*),
Hovakimyan A. E. (*Executive Secretary*), **Khachatryan N. G., Manasyan A. S.,**
Shahverdyan G. M., Simonyan A. H., Zakaryan S. A.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆ
ՈՒ ՄՈՂԵԼՆԵՐԸ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ.
ԹԵՐ ԵՎ ԴԵՄ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Համաշխարհային մտքի պատմության ընթացքում ձևավորվել են հասարակության կազմակերպման լավագույն ձևի, ցանկալի ապագայի վերաբերյալ տարբեր հայեցակարգեր: Եթե կրոնը լավագույն ապրելակերպ խոստանում է այնկողմնային կյանքում, ապա քաղաքագիտական և փիլիսոփայական բազմաթիվ դպրոցներ և ուսմունքներ փորձել են այդ լավագույն կյանքը, պայմանավորված հասարակական հարաբերությունների արդյունավետ կազմակերպմամբ, պատկերացնել ու ձևավորել իրական կյանքում:

Այդպիսի երազանքներից կարելի է համարել Պլատոնի իդեալական պետության գաղափարը, Թ. Մորի «Ուտոպիան», Թ. Կամպանելայի «Արևի քաղաքը», Կ. Ա. Մեն-Սիմոնի, Ֆ. Շ. Ֆուրիեի ուտոպիստական հայացքները, կոմունիզմի մասին մարքսիստական պատկերացումները և այլն: Այդ բոլոր երազանքների ու ծրագրերի շարքում թերևս ամենակենսունակն ու իրատեսականը եղավ **քաղաքացիական հասարակության գաղափարը:**

Ինչպես ժողովրդավարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության գաղափարը դոգմա չէ: Այն փոխակերպվել, փոփոխությունների է ենթարկվել համաշխարհային մտքի պատմության և պրակտիկայի ընթացքում խմբագրվելով, շտկվելով ու զարգանալով:

Հատկապես մեր ժամանակներում ժողովրդավարության ապագան մեծապես կապվում է քաղաքացիական հասարակության գաղափարի հետ: Ժողովրդավարական համակարգերի զարգացման ներկա փուլին բնորոշ շատ ու շատ խնդիրների լուծումը հիրավի պայմանավորված է քաղաքացիական հասարակության զարգացմամբ: Վերջինս էլ իր հերթին ենթադրում է քաղաքացիական հասարակության գաղափարի, դրա բաղադրիչների, կառուցվածքային և գործառնության առանձնահատկությունների, զարգացման հնարավոր ուղիների ու մոդելների վերաբերյալ մեթոդապես հիմնավոր հետազոտությունների և իրատեսական մշակումների անկախություն:

Թեև մասնագիտական գրականության մեջ քաղաքացիական հասարակության գաղափարի ձևավորումն ավելի շատ վերագրվում է լու-

սավորության դարաշրջանին և լուսավորչական փիլիսոփայությանը, սակայն հարկ է նկատել, որ այդ հասկացության արմատները հասնում են մինչև հին հունական և հռոմեական դասական փիլիսոփայության ակունքները:

Դեռևս հին հունական և հռոմեական մտածողների երկերում հանդիպում են քաղաքական (Politike Koinonia)¹ և քաղաքակիրթ (Societas Civium)² հանրություն հասկացությունները:

Հին հունական քաղաքակրթության պայմաններում **քաղաք** և **պետություն** հասկացություններն օբյեկտիվորեն նույնացվում էին: Քաղաքացիությունը մեկնաբանվում էր որպես տվյալ հանրության լիիրավ անդամ լինելու, պետական կառույցների հետ կանոնակարգված հարաբերություններ, իրավունքներ ու պարտականություններ ունենալու իրողություն: Քաղաքացիական կամ քաղաքական հասարակությունն ընկալվում էր որպես հանրություն, որի կազմակերպման ու կառավարման գործընթացներում առանցքային դեր էր վերապահված **պետական հաստատություններին**:

Քաղաքացիական հասարակության նման ըմբռնումը, որոշ տարբերություններով հանդերձ, բնորոշ է նաև 17-18-րդ դդ. լուսավորիչներին: 17-րդ դարի անգլիացի փիլիսոփա Թ. Հոբսը, ինչպես և հասարակական դաշինքի այլ տեսաբաններ (Բ. Սպինոզա, Ջ. Լոկ, Շ. Մոնտեսքյո) հասարակության պատմությունը բաժանում էին երկու փուլի՝ **բնական** (կամ մինչքաղաքական, մինչքաղաքացիական) և քաղաքացիական (կամ քաղաքական): Բնական վիճակին բնորոշ է հանրային կյանքի կազմակերպման ու կառավարման կարևոր հաստատության՝ պետության բացակայությունը: Այդ շրջանում մարդիկ հարաբերվում են ոչ թե որպես նույն հանրության անդամ-քաղաքացիներ, այլ որպես կենսաբանական անհատներ («մարդը մարդուն գայլ է»³): Չկարգավորված ազատությունը, տիրելու, սեփականացնելու կամքը, մրցակցու-

¹ «... this is that which is called in the State and the Political-Association». *Aristotle's Politics*. Books I, III, IV, (VII). With an English translation by W.E. Bolland. London, 1877; Longmans, Green and Co., Book I, էջ 107: <https://archive.org/stream/cu31924071172914#page/n121/mode/2up> (դիտումը՝ 23.01.2017): Տե՛ս նաև *Jean L. Cohen and Andrew Arato*, *Civil Society and Political Theory*. Massachusetts Institute of technology Press, 1994, Chapter 2, էջ 84-85:

² Տերմինը ներմուծել է Մ. Տ. Ցիցերոնը. «... quare cum lex sit civilis societatis vinculum, ius autem legis aequale, quo iure societas civium teneri potest, cum par non sit condicio civium? si enim pecunias aequari non placet, si ingenia omnium paria esse non possunt, iura certe paria debent esse eorum inter se qui sunt cives in eadem re publica. quid est enim civitas nisi iuris societas civium?». («De Republica Գիրք I, XXXII, 49»): <http://www.thelatinlibrary.com/cicero/repub1.shtml> (դիտումը՝ 23.01.2017): Տե՛ս նաև *Civil Society: history and possibilities*. Edited by Sudipta Khaviraj and sunil Khilnani. Cambridge University Press, 2011, էջ 33:

³ «Homo homini lupus est». Հռոմեացի կատակերգու Տիտուս Պլավտուսի «Asinaria» («Ավանակներ») կատաղերության մեջ հանդիպող թևավոր դարձած արտահայտությունը Թ. Հոբսը հիշատակում է հասարակության պատմության մինչքաղաքական փուլը բնութագրելիս (տե՛ս **Гоббс Т.** Основы философии. Часть 3-я: «О гражданине». Сочинения в двух томах. Т. 1., М., 1989, էջ 271):

յունն ու միւյնն անկատար անվստահությունը առաջ են բերում «բոլորի պատերազմը բոլորի դեմ»⁴:

Մշտական վտանգներն ու անապահովությունը ստիպում են մարդկանց միավորվել և ստեղծել ընդհանուր ապահովության կառույց պետություն: Մարդիկ օտարում են իրենց բնական իրավունքների մի մասը, դրանով օժտում պետությանը՝ փոխարենը ստանալով մնացած իրավունքների ազատ և անարգել իրականացման երաշխիքներ: Այդպիսով նրանք ձեռք են բերում նոր **քաղաքացու կարգավիճակ**: Քաղաքացիական կացությունն ու քաղաքացիների հանրությունը կենսակերպի, իրավունքների տնօրինման առավել քաղաքակիրթ և երաշխավորված հնարավորություններ ընձեռող ձև է⁵:

Քաղաքացիական հասարակության գաղափարը հետագա փոխակերպումների ու լրամշակումների ենթարկվեց ինչպես լուսավորչական, այնպես էլ հետլուսավորչական փիլիսոփայական մտքի շրջանակներում: Մասնավորապես, պետական կառավարման միապետական ձևի մասին պատկերացումներին փոխարինելու եկավ պետական իշխանությունը միւյնն անկատար գույակշող՝ օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև բաշխելու, դրանց միջև հակակշիռներ ձևավորելու գաղափարը, ինչն ավելի լայն հնարավորություններ էր ընձեռում քաղաքացիների իրավունքների իրացման և պաշտպանության առումով:

19-րդ դարի զանգվածային շարժումները և քաղաքական գործընթացները նոր շտկումներ մտցրին քաղաքացիական հասարակության դերակատարների և ինստիտուցիոնալ բաղադրիչների մասին պատկերացումներում: Դա մի շրջան էր, երբ, ֆրանսիացի սոցիոլոգ և հոգեբան Գ. Լեբոնի բնութագրմամբ՝ արքաների իրավունքին փոխարինելու էր եկել զանգվածների իրավունքը, հերոսների ժամանակներին փոխարինելու էր եկել «զանգվածների դարաշրջանը»⁶ և զանգվածների ուժը կազմակերպող ու ուղղորդող քաղաքական կուսակցությունների ժամանակաշրջանը: Վերջիններս պետության հետ հարաբերություններում ստանձնեցին գույակշողման և հակակշողման, քաղաքացիների շահերի ինտեգրման և քաղաքական որոշումների մակարդակում դրանց ներկայացման գործառույթներ: Ձևավորվեցին ներկայիս իմաստով «իշխանություն» և «ընդդիմություն» բևեռները:

Քաղաքացիական հասարակության վերաբերյալ պատկերացումների զարգացման նորագույն շրջանում էական ազդեցություն ունեցան հանրային կառավարման գործընթացներում ապակենտրոնացվածության և ինքնավարության սկզբունքների կարևորության վերաբերյալ Ալ. դե Թոքվիլի, Գ. Հեգելի գաղափարները⁷:

⁴ Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского. Указ. соч. Т. 2, с. 94-96.

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 129-133:

⁶ Տե՛ս Լեբոն Գ. Психология народов и масс. СПб., 1995, էջ 149-151:


⁷ Տե՛ս Hegel G. Elements of the Philosophy of Right. Cambridge University Press, 1991, էջ 219-226, Tocqueville A. de, De la démocratie en Amérique. Volume 1, Ch.5, Pagnerre, 1848, էջ 95-156:

20-րդ դարում հետզհետե ավելի ու ավելի սկսեց կարևորվել ոչ պետական (ոչ քաղաքական), ոչ առևտրային (շահույթ չհետապնդող) կազմակերպությունների՝ «երրորդ սեկտորի» դերակատարությունը հանրային կյանքում: Ներկայումս այդ կազմակերպություններն էական դերակատարություն ունեն քաղաքացիների շահերի ինտեգրման, ազդեցացման (խմբավորման), արտիկուլյացման (ձևակերպման) և կուսակցությունների ու պետական հաստատությունների հետ հարաբերություններում դրանց ներկայացման գործում: Հանրային կառավարման գործընթացներում դրանք իրականացնում են կազմակերպչական, կարգավորող-ինտեգրատիվ, քարոզչական, վերահսկողական և այլ կարևոր գործառնություններ:

Քաղաքացիական հասարակության ժամանակակից ընկալումներում, պետական իշխանության կառույցներից և քաղաքական կուսակցություններից բացի, հանրային կյանքի կազմակերպման ու կառավարման գործընթացներում կարևոր առաքելություն են իրականացնում նաև կամավորության և շահերի ընդհանրության սկզբունքով ձևավորված, ինքնավարության սկզբունքով գործող ոչ կառավարական հասարակական կազմակերպությունները (տե՛ս գծապատկեր 1-ը): Լայն ըմբռնմամբ՝ երրորդ սեկտորի շրջանակներում պետք է դիտարկել ինչպես ֆորմալ հասարակական կազմակերպությունները, դրանց ցանցերն ու միավորումները, այնպես էլ շարժումները, շահառու խմբերը, զանգվածային լրատվամիջոցները:

Գծապատկեր 1

Քաղաքացիական հասարակության հիմնարար բաղադրատարրերը



Համաշխարհային մտքի զարգացման տարբեր փուլերում քաղաքացիական հասարակության վերաբերյալ պատկերացումներին, որոշակի տարբերություններով հանդերձ, ընդհանուր է գաղափարական-

մեթոդաբանական հենքը՝ *որոշակի շահեր և անօտարելի իրավունքներ ունեցող քաղաքացու՝ որպես հասարակական համակարգի կենտրոնական արժեքի վերաբերյալ պատկերացումը*⁸:

Կարելի է առաջարկել քաղաքացիական հասարակության երկու սահմանում:

Լայն, փիլիսոփայական իմաստով՝ քաղաքացիական հասարակությունը հանրային կյանքի կազմակերպման ու կառավարման այնպիսի եղանակ է, որտեղ կենտրոնական արժեքը, հիմնական գործող սուբյեկտը և վերջնական նպատակը մարդ-քաղաքացին է՝ իր շահերով, պահանջունքներով ու իրավունքներով:

Տվյալ ըմբռնմամբ քաղաքացիական հասարակության հաստատությունների շարքում դիտարկվում են վերը ներկայացված գծապատկերի բոլոր օղակները:

Նեղ իմաստով, կարևորելով հանրային կյանքի կազմակերպման և կառավարման գործընթացներում ոչ կառավարական կազմակերպությունների դերը, քաղաքացիական հասարակություն հասկացության տակ հասկանում են երրորդ սեկտորը՝ ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, ստեղծագործական միավորումները, բարեգործական կազմակերպությունները, քաղաքացիական շարժումներն ու ակտիվության ձևերը:

Ըստ այդմ՝ *քաղաքացիական հասարակությունը ժողովրդավարության պայմաններում հանրային կյանքի կազմակերպման ձև է, որին բնորոշ են. 1) կամավորության սկզբունքով ձևավորված ոչ պետական կառույցների (միություններ, ընկերակցություններ, կազմակերպություններ) լայն ցանց և 2) տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր, մշակութային ոչ պետական հարաբերությունների ընդգրկուն համակարգ:*

Առավել տարածված է և միջազգային կազմակերպությունների փաստաթղթերում ևս կիրառական է այս երկրորդ ըմբռնումը⁹:

⁸ Տե՛ս **Hovhannisyán H. O.** The Factor of Human Rights Protection as Criteria for the Development in the Social System. «Armenia: A Human Rights Perspective for Peace and Democracy». Materials of Symposium. Potsdam, 2005, էջ 14-25:

⁹ Տե՛ս CIVICUS Civil Society Index. Armenian Civil Society: From Transition to Consolidation. Analytical Country Report. Yerevan, 2010, էջ 14: Համաշխարհային բանկը որպես հիմք ընդունում է առաջատար գիտահետազոտական կենտրոնների կողմից մշակված հետևյալ սահմանումը. «Քաղաքացիական հասարակություն տերմինը վերաբերում է ոչ պետական, շահույթ չհետապնդող կազմակերպություններին, որոնք մասնակցում են հանրային կյանքին, արտահայտում են իրենց անդամների և կամ այլ անձանց արժեքները և շահերը... Ընդգրկում է կազմակերպությունների լայն շրջանակ, ներառյալ ոչ կառավարական կազմակերպությունները, համայնքային խմբերը, արհմիությունները, բարեգործական և կրոնական կազմակերպությունները, պրոֆեսիոնալ միությունները և հիմնադրամները» (<http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/CSO/0,contentMDK:20101499~menuPK:244752~pagePK:220503~piPK:220476~theSitePK:228717,00.html> (վերջին դիտումը՝ 23.01.2017.):

Ոչ կառավարական կազմակերպությունների և պետության, ոչ կառավարական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների միջև հարաբերությունների առումով կարելի է առանձնացնել քաղաքացիական հասարակության մի շարք մոդելներ:

Ոչ կառավարական կազմակերպությունների և պետական հաստատությունների միջև հարաբերությունների հիման վրա հարկ է առանձնացնել քաղաքացիական հասարակության **էտատիստական¹⁰ (վերահսկվող), լիբերալ (երբեմն էլ՝ բախումնային) և գործակցային** մոդելները:

Առաջինի դեպքում հասարակական կազմակերպությունները ստեղծվում են հիմնականում պետության նախաձեռնությամբ, նրանց խնդիրներն ու գործունեության ձևերը թելադրվում և խստորեն վերահսկվում են պետական հաստատությունների կողմից: Այդ կազմակերպություններին վերապահված է հանրային կառավարման «սայլի հինգերորդ անիվի» դեր: Տվյալ մոդելն առավել բնորոշ է ամբողջատիրական հասարակություններին (ինչպիսին էր, օրինակ, Խորհրդային Միությունը):

Երկրորդ՝ **լիբերալ** մոդելի դեպքում պետության միջամտությունը և մասնակցությունը ոչ կառավարական կազմակերպությունների ոլորտին համարվում է անցանկալի և հասցվում է նվազագույնի: Նվազագույնի է հասցվում նաև ոչ կառավարական կազմակերպությունների հաշվետվողականությունը պետությանը: Պետության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հարաբերությունները հաճախ ընդունում են **բախումնային բնույթ**, դրանք հայտնվում են «բարիկադների տարբեր կողմերում» և միմյանց ընկալում որպես խիստ անցանկալի հակառակորդներ:

Նշված երկու մոդելներն էլ հասարակական համակարգի ներդաշնակ զարգացման տեսանկյունից պարունակում են վտանգներ: Դրանք կարող են ինչպես կասեցնել ու կաշկանդել քաղաքացիական հասարակության հաստատությունների զարգացումը, այնպես էլ հանգեցնել սոցիալական ու քաղաքական ցնցումների:

Հայաստանյան իրականության համար առավել նախընտրելի է և հեռանկարային **գործակցային մոդելը**: Այս մոդելին բնորոշ են համագործակցության, փոխադարձ վերահսկողության և փոխներթափանցվածության սկզբունքները: Քաղաքացիական կազմակերպություններն ավելի ճկուն են իրենց գործելակերպում. կարող են հանդես գալ ինչպես պետության կողմից իրականացվող քաղաքականությանը ընդդիմացողի ու քննադատողի, այնպես էլ աջակցողի դիրքերից, եթե այդ քաղաքականությունը համապատասխանում է իրենց ծրագրերին ու նպատակներին: Այս տարբերակի դեպքում հասարակական կազմակերպությունների առավել իրազեկ և փորձառու ներկայացուցիչները հետզհետե ընդգրկվում են պե-

¹⁰ Ֆրանսերեն *état – պետություն* բառից:

տական իշխանության, տարածքային, տեղական ինքնակառավարման տարբեր օղակներում, իսկ պետական իշխանության ներկայացուցիչները մասնակցում են քաղաքացիական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին: Գործակցային մոդելը թույլ է տալիս հաղթահարել քաղաքացիական հասարակության կազմակերպություններ-պետություն հարաբերություններում օտարվածությունը, բևեռացումն ու բախումնային իրավիճակները՝ նպաստելով արդյունավետ երկխոսությանն ու համագործակցությանը:

Հայաստանում քաղաքացիական հասարակության գործակցային մոդելի զարգացման նպատակով, կրթական և քարոզչական ծրագրերից զատ, կարևոր են՝ ա) տեղական աղբյուրներից ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսական աջակցության արդյունավետության բարձրացման և բ) պետության և ՔՀԿ-ների միջև սոցիալական գործընկերության մեխանիզմների ու մշակույթի ձևավորման և դրանց զարգացման ուղղությամբ իրականացվելիք քայլերը:

Հայաստանյան ՔՀԿ-ների շատ փոքր մասն ունի վճարվող աշխատակազմ¹¹: Այդ կազմակերպությունների մեծ մասն իր ծրագրերն իրականացնում է արտասահմանյան և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող դրամաշնորհների օգնությամբ:

Տեղական աղբյուրներից, մասնավորապես պետական բյուջեից ևս հատկացվում են դրամաշնորհներ: 2012 թ. պետական բյուջեի տարբեր հոդվածներով տեղական հասարակական կազմակերպություններին տրամադրվել է ընդհանուր առմամբ 7,4 միլիարդ դրամ: Այդ գումարը բաշխվել է 115 կազմակերպությունների¹²: Ընդ որում, այդ գումարի 2/3-ը՝ 4,87 միլիարդ դրամը, բաժին է հասել ընդամենը 19 կազմակերպության¹³:

Պետական բյուջեից հայաստանյան ՔՀԿ-ներին դրամաշնորհների հատկացման գործընթացն աչքի է ընկնում համակարգված քաղաքականության, հստակ և թափանցիկ ընթացակարգերի բացակայությամբ, իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության դժվար մատչելիությամբ և կոռուպցիոն ռիսկերով:

Խնդրի լուծման արդյունավետ եղանակ կարող է լինել արևմտաեվրոպական մի շարք երկրների¹⁴ օրինակով «Քաղաքացիական հասարա-

¹¹ 2010 թ. անցկացված ուսումնասիրության տվյալներով, դրանց թիվը կազմում էր 19,1 %: *Ըստ CIVICUS Civil Society Index. Armenian Civil Society: from Transition Stage to Consolidation. Analytical report. Yerevan, 2010, էջ 29:*

¹² ՀՀ արդարադատության նախարարության տվյալներով, 2012 թ. հոկտեմբերի դրությամբ պետքեզիստրում գրանցված էին 3432 հասարակական կազմակերպություններ, 733 հիմնադրամներ, 301 իրավաբանական անձանց միություններ:

¹³ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կառույցներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի առկա վիճակը և հիմնախնդիրները», PFCS, USAID, Counterpart International, Եր., 2013, էջ 11:

¹⁴ Այդպիսի հիմնադրամներ են գործում Հունգարիայում, Խորվաթիայում, Ալբանիայում, Էստոնիայում, Չեխիայում:

կության աջակցության ազգային հիմնադրամի» ստեղծումը: Արդյունքում՝ ՔՀԿ-ներին որպես դրամաշնորհներ ու նվիրատվություններ հատկացվող բյուջետային միջոցները կտրամադրվեն ոչ թե տարբեր գերատեսչությունների, այլ կկենտրոնացվեն ՔՀԱԱ հիմնադրամում:

Հիմնադրամը կմշակի ու կհամակարգի պետական կառավարման օղակներից և ՔՀԿ-ներից ստացված հայտերն ու առաջարկությունները, կանցկացնի ուսումնասիրություն՝ պարզելու համար այն գերխնդիրների շարքը, որոնց լուծման գործում էական է ՔՀԿ-ների մասնակցությունը: Ապա փորձագիտական հետազոտությունների միջոցով կորոշվի այդ գերխնդիրների կարևորության ու հրատապության աստիճանը, կսահմանվեն համապատասխան գործակիցներ, ըստ որոնց կբաշխվեն տվյալ տարվա բյուջեից հատկացվող միջոցները:

Կան բազում գերխնդիրներ, որոնք դուրս են արտասահմանյան ու միջազգային դոնոր կազմակերպությունների հետաքրքրության տիրույթից, սակայն էական են հայաստանյան հասարակության համար: Օրինակ՝ զինձառայողների ու նրանց ընտանիքների, զոհված ազատամարտիկների այրիների, նրանց ընտանիքների անդամների աջակցության հարցը: Առանձնապես արդյունավետ կարող է լինել նաև պետական կառույցների կողմից իրականացվող ծրագրերի մշտադիտարկման, կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացներում ՔՀԿ-ների դերակատարությունը:

ՔՀԿ-ների ֆինանսական կայունության ցուցանիշի բարելավման, ինչպես նաև պետական կառույցների կողմից իրականացվող քաղաքականության և ծրագրերի արդյունավետության բարձրացման ուղիներից մեկն էլ սոցիալական աջակցության, կրթական, հետազոտական որոշ ծրագրեր, ինչպես նաև պետության կողմից իրականացվող ծրագրերի ընթացքի մշտադիտարկման ու վերահսկողության մի շարք գործընթացներ մրցութային կարգով հասարակական կազմակերպություններին պատվիրելու ավանդույթի ձևավորումն ու զարգացումն է¹⁵:

Սոցիալական համագործակցության այդ մոդելի կիրառումը երաշխավորում է ֆինանսական ծախսերի կրճատում՝ ծրագրի իրականացման համար լրացուցիչ մարդկային, նյութական և մտավոր ռեսուրսների ներգրավմամբ, իրականացվող ծրագրերի վերաբերյալ հրապարակայնության ապահովում, կատարված աշխատանքի որակի չափորոշիչների սահմանում, պետական կառավարման մարմինների և ՔՀԿ-ների համատեղ աշխատանքի և փոխադարձ վերահսկողության դաշտի ընդլայնում:

¹⁵ Այդ մասին տե՛ս նաև ՀՀ հանրային խորհրդի քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի կողմից մշակված «Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ»-ի նախագիծը, Եր., 2012, էջ 37-38: <http://www.publiccouncil.am/hy/documents/item/2012/10/22/program1/> (ղիտումը՝ 10.02.2017):

Նշված առաջարկությունների իրականացումը թույլ կտա.

- էապես բարելավել հայաստանյան ՔՀԿ-ների ֆինանսական վիճակը,
- ավելացնել պետական կառույցների նկատմամբ ՔՀԿ-ների վստահության ցուցանիշը,
- խթանել պետական կառույցներ-ՔՀԿ-ներ համագործակցությունը և բարելավել փոխադարձ վերահսկողության գործընթացները,
- ավելացնել հանրային նշանակություն ունեցող խնդիրների լուծման գործընթացներին ՔՀԿ-ների մասնակցության ցուցանիշն ու դրա արդյունավետությունը,
- կրճատել հանրային կարևորություն ունեցող խնդիրների լուծման նպատակով կատարվող ծախսերը,
- խուսափել քաղաքացիական հասարակության վերահսկվող և բախումնային մոդելներից՝ հիմքեր ձևավորելով քաղաքացիական հասարակության առավել արդյունավետ՝ գործակցային մոդելի զարգացման համար:


Քաղաքական կուսակցությունների հետ ՔՀԿ-ների հարաբերության հիմքի վրա առանձնանում են քաղաքացիական հասարակության **ստաբանջատող (segmentational)** և **միավորող (linked)** մոդելները:

Առաջին տարբերակի դեպքում ՔՀԿ-ները դասավորվում են ըստ սոցիալական և քաղաքական սահմանազատումների (շերտավորումների): Դրանք կրում են դասակարգային բնույթ, հաճախ ստեղծվում են կուսակցությունների կողմից և ներկայանում են որպես վերջիններիս կցորդներ (տե՛ս գծապատկեր 2): Նման իրավիճակում հասարակական համակարգը խոցելի է դառնում քաղաքական կոնֆլիկտների և դրանց ռեզոնանսային արձագանքների համար:

Միավորող մոդելի դեպքում ՔՀԿ-ները հետապնդում են այնպիսի նպատակներ, որոնք միավորում են սոցիալական տարբեր խավերի պատկանող և տարբեր քաղաքական-գաղափարական կողմնորոշում ունեցող քաղաքացիների: Հասարակական համակարգում ՔՀԿ-ները «դասավորվում են» սոցիալական և քաղաքական շերտավորումներին «ուղղահայաց» սկզբունքով: Այդպիսի դասավորությունը նպաստում է սոցիալական տարբեր խավերի երկխոսությանն ու համագործակցությանը, քաղաքական կազմակերպությունների միջև հակասությունների և բախումնային իրավիճակները մեղմացնելուն, բանակցային միջավայրի ձևավորմանը¹⁶: Այս մոդելը նախընտրելի է հասարակական համակարգի միասնականության և անվտանգության ապահովման տեսանկյունից:

¹⁶ Տե՛ս Հ. Օ. Հովհաննիսյան, Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Եր., 2003, էջ 34-35:

Քաղաքացիական հասարակության տարանջատող և միավորող մոդելները



Կարևոր է, որ պետությունը կարողանա ուշադրություն և հոգածություն ապահովել այնպիսի հասարակական կազմակերպությունների ստեղծմանն ու զարգացմանը, որոնք իրենց գործունեությամբ ի վիճակի են նպաստելու նաև հասարակական տարբեր խավերի միջև սոցիալական օտարվածության հաղթահարմանն ու համագործակցությանը:

Տեսական գրականության մեջ հանդիպում են քաղաքացիական հասարակության գաղափարի վերաբերյալ նաև սկեպտիկական և քննադատական դիրքորոշումներ: Եթե 18-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա Ժ.-Ժ. Ռուսոն գտնում էր, որ քաղաքական-քաղաքացիական հասարակությունը հիմնված է անարդարության, գույքային անհավասարության և շահագործողական հարաբերությունների վրա¹⁷, ապա ժամանակակից հնդիկ հետազոտող Ջայ Սենը կարծիք է հայտնում է, որ քաղաքացիական հասարակությունը նեոգաղութատիրական ծրագիր է, որը ղեկավարվում է գլոբալ էլիտաների կողմից իրենց սեփական շահերի իրականացման

¹⁷ Տե՛ս **Rousseau J. J.**, The Social Contract or Principles of Political Right. Virgil, Æneid xi. 1762, էջ 15: https://www.ucc.ie/archive/hdsp/Rousseau_contrat-social.pdf (նիսնումը՝ 23.01.2017), **Նոյնի** A Discourse Upon the Origin and Foundation of the Inequality among Mankind. London, Pallmall, 1761, էջ 97: <https://archive.org/details/discourseuponor00rous> (նիսնումը՝ 23.01.2017):

նպատակով¹⁸: Պարսիկ մտավորական Սոհամնադ Ռեզա Նիքֆարը նկատում է, որ քաղաքացիական հասարակությունը չի կարող իդեալական հասարակություն համարվել, քանի որ այդտեղ ևս չեն բացառվում թշվառությունը, հալածանքն ու սոցիալությունը¹⁹: Սակայն կարևոր է, որ թշվառներն ու հալածվածները քաղաքացիական հասարակության պայմաններում կարող են միավորվել և պայքարել իրենց իրավունքների ու ազատությունների համար:

Այդուհանդերձ, քննադատական տեսակետների առկայությունը ևս դրական երևույթ կարելի է համարել գաղափարի զարգացման, կատարելագործման, հնարավոր թերություններից ձերբազատման առումով:

Բանալի բառեր - քաղաքացիական հասարակություն, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, հասարակական համակարգի անվտանգություն, քաղաքացիական հասարակության էտատիստական, լիբերալ, բախումնային, գործակցային, տարանջատող և միավորող մոդելներ

ОВАНЕС ОВАНИСЯН – *Идея и модели гражданского общества: тенденции развития, аргументы за и против.* – В статье анализируются основные этапы развития и главные трансформации идеи гражданского общества, начиная с греко-римской классической философии до современных концепций. Рассматриваются две интерпретации гражданского общества – в широком (философском) и узком (как сектор организации общественной жизни) понимании, предлагаются соответствующие определения. Анализируются статистические (контролируемые), либеральные, конфликтные, партнёрские, объединяющие и разъединяющие модели гражданского общества. Обосновывается целесообразность объединяющих и партнёрских моделей с точки зрения безопасности и гармоничного развития социальной системы.

Ключевые слова: гражданское общество; организация гражданского общества; безопасность социальной системы; модели гражданского общества

HOVHANNES HOVHANNISYAN – *The Idea and Models of Civil Society: Development Tendencies, Arguments Pro and Con.* – The article presents the main stages of development and major modifications of the idea of civil society from Greek and Roman antique philosophy to modern researchers. It discusses two – broad (philosophical) and narrow (the third sector of organizing civil society) – perceptions of civil society and proposes corresponding definitions. Etatistic (controlled), liberal, conflicting, partnership, segmentational and linked models of civil society are analyzed. The expediency of linked and partnership models is substantiated from the position of security and harmonious development of the civic society.

Key words: civil society; civil society organizations; civil system security; etatistic, liberal, conflicting, partnership, segmentational and linked models of civil society

¹⁸ St u Paper: Interrogating the Civil. Engaging Critically with the Reality and Concept of Civil Society. By Jai Sen. http://wiki.p2pfoundation.net/Engaging_Critically_with_the_Reality_and_Concept_of_Civil_Society (դիտումը՝ 23.01.2017):

¹⁹ St u **Nikfar M. R.**, Violence, Human Rights and Civil Society. Cologne, 1999. <https://tavaana.org/en/content/mohammad-reza-nikfar> (դիտումը՝ 23.01.2017):

**ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՏՈՂԻԱՅԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

ՄԵՐԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Մարդն անդադար փորձել է ինքնահաստատվել իր համար «օտար» աշխարհում՝ ստեղծելով իրեն հարմար սոցիալական միջավայր, որը, սակայն, մեր օրերում անասելի արագությամբ է փոփոխվում: Կյանքը հեռանկար է, մարդկային մտքի նորանոր կերտվածքներով և նախագծերով ողողված **հնարավորի** իրագործման լայնարձակ հորիզոն: Սոցիալական նախագծերն իրենց հերթին լավ աշխարհ ճարտարակերտելու հնարավորություններ են, որոնց շնորհիվ մարդը քայլ է կատարում սեփական պատկերացումների հանգույն աշխարհաստեղծման ոլորտ: Սոցիալական աշխարհում որոշակի առաջընթաց, զարգացում տեղի է ունենում առկա իրերի կարգի ինչպիսին լինելու գաղափարների անդադար գոյավորման շնորհիվ: Սոցիալական իրականության իմաստավորման փորձերը միշտ շաղախված են այնպիսի պատկերացումների հետ, թե ինչպիսին **պետք է** լինի այն. այստեղից էլ անընդհատ առաջադրվող ուստոպիաների և գաղափարախոսությունների շքերթը: Կյանքի կազմակերպման և կանոնակարգման համար դարեր շարունակ առաջադրվել են բազմաթիվ նախագծեր, որոնք այս կամ այն կերպ ներգործում են մարդու աշխարհընկալման և կենսափիլիսոփայության վրա: Անկախ այն հանգամանքից՝ դրանք մարդուն մատուցում են գիտական ճշմարտություններ և փաստեր, թե ցանկալի և հրապուրիչ գաղափարների մի բույլ են, այնուամենայնիվ մարդը զգում է դրանց կարիքը՝ սեփական պատկերացումները թարմացնելու և նորոգելու համար: Աշխարհը կարծես ուղղորդված հաղորդագրությունների դաշտ լինի, որոնք աննկատորեն ներագրում են մարդու վրա, կանխորոշում նրա վարքն ու մտածողության ձև թելադրում: Ներգործելու նմանատիպ եղանակները շատ բազմաբնույթ են, սակայն դրանց թողած հետքը հասարակության մեջ անհնար է հերքել: Դժվար է պատկերացնել մի հասարակություն, որը բացարձակ անկախ լինի արտաքինից ներագրող գաղափարներից և կյանքն ուղղորդող ուղենիշներից:

Խ. Օրտեգա ի Գասետի դիտարկմամբ՝ մարդկային պատմության ընթացքը սերտորեն կապակցված է տվյալ ժամանակահատվածում հավատալիքների ազդեցության հզորության հետ: Ըստ նրա՝ մարդը համոզմունքների հավաքածու է և առանց որոշակի կենսական կողմնորոշիչների նա չի կարող գործել, ապրել և ընդհանրապես գոյատևել:

Ըստ այդմ՝ նա գտնում է, որ «հենց համոզմունքներն են կառուցարկում մարդուն, մարդն այն է, ինչ իր համոզմունքները»¹: Իսկ հասարակության համար որոշիչ դեր կատարող նման համոզմունքներ ձևավորվում են տարբեր ազդեցությունների շնորհիվ:

Սոցիալական նոր և այլընտրանքային գաղափարներն ուստոպիական նախագծերի, գաղափարախոսությունների տեսքով, որպես հասարակական զարգացումն ապահովող միջոցներ, մշտաբար սահմանապահի պես հսկում են սոցիալական կյանքն ու ամուր արմատներով կառչած են մարդուն՝ խթանելով նրա արարման մղումը: Ինչպես ուստոպիան, այնպես էլ գաղափարախոսությունը թատերահարթակում առավել հաճախ հայտնվում են սոցիալական ճգնաժամերի ժամանակ, երբ ավելի քան երբեք լուրջ փոփոխությունների կարիք է զգացվում: Մրանք ինչ-որ առումով սոցիալական անոմիայի հաղթահարման ձևերից են, որտեղ գաղափարախոսությունը քաղաքական աշխարհայացքի դեր է կատարում, իսկ ուստոպիան՝ տվյալ սոցիալական տարածության ապագան մոդելավորելու գործիքի: Այլընտրանքային գաղափարների առանցքում սովորաբար հայտնվում է այսպես կոչված նոր միջին խավը՝ հասարակության այն հատվածը, որը փոփոխությունների է ձգտում, հատկապես երբ սոցիալ-քաղաքական վայրիվերումների, նորի հաստատման փուլ է, որը դեռ ավարտին հասցված չէ: Ցանկացած պետությունում՝ լինի կապիտալիստական, ազատական թե սոցիալիստական, իշխանության հիմքը կազմող ճշմարտությունները չունեն վերմարդկային սկիզբ, աստվածային նախախնամության տեսքով չեն երևան գալիս. դրանք ունեն մարդկային՝ բանական ծագում, որոնք ձևակերպվում և ամփոփվում են գաղափարախոսությունների, ուստոպիաների միջոցով: Որպեսզի քաղաքական համակարգը գործառի բնականոն կերպով, անհրաժեշտ է գաղափարական ճշմարտությունների և պետության ներսում պրակտիկայի անընդհատ վերարտադրություն, քանի որ երբ սկսում է չվերարտադրվել դրա հիմնարար գաղափարը, ճեղքվածք է առաջանում եղածի, ներկայի և գաղափարախոսության միջև: Գաղափարախոսության և պրակտիկայի միջև առաջացած անդունդը գնալով խորանում է և դառնում գործող քաղաքական համակարգի քայքայման պատճառ:

Գաղափարախոսությունը համոզմունքներ ձևավորող միջոցներից մեկն է, որն արմատավորված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Այն և՛ խանգարում, և՛ օգնում է մարդուն ու հասարակությանը կողմնորոշվելու՝ դառնալով ուղենիշ սոցիալ-քաղաքական կյանքում: Անկախ իր կամքից՝ մարդը գրեթե միշտ գաղափարախոսական գիտելիքի կրող է, օբյեկտիվ և մաքուր գիտելիք գրեթե անհնար է պատկերացնել: Եթե ի սկզբանե հասարակությունը համակված է որևէ գաղափարախոսությամբ, ապա բավականին բարդ է կազմաքանդել այդ գա-

¹ Ортега-и-Гассет Х. Избранные труды. М., 1997, с. 437.

դափարախոսությունը, քանի որ այդպիսով փորձ է արվում վերացնել այն, ինչը ժամանակին իմաստավորում, ուղղորդում էր սոցիալական կյանքն ու կադապարում մարդու վարքը՝ իր ճիշտներում առնելով առհասարակ կյանքը՝ իր բոլոր դրսևորումներով:

Այլընտրանքային աշխարհի նախագծերում միշտ առկա է ուտոպիականը, որը բացում է նոր հորիզոններ, նոր իմաստային համակարգեր, որոնք որոշակիորեն հերքում են այն գաղափարախոսական գիտելիքը, որն առկա է հասարակության մեջ: Որպես այլընտրանք՝ ուտոպիան բավականին հաջողությամբ ներթափանցում է հասարակական տրամադրությունների մեջ և դառնում արմատական փոփոխությունների խթան: Չանգվածային գիտակցության մեջ ներթափանցելու և յուրացվելու դեպքում ուտոպիան դառնում է դրա մի մասն ու քաղաքական, հասարակական ոլորտում վերածվում գործուն ուժի: Այս պարագայում «լուսավոր ապագայի» պատկերով տարված զանգվածները չեն կարող հաշվարկել այն կորուստները, որոնք հնարավոր է հանդիպեն այդ ճանապարհին:

Ինչպես գաղափարախոսությունը, այնպես և ուտոպիան հասարակական գիտակցության մաս են, երկուսն էլ ունեն իմաստաստեղծ գործառույթ և արարում են մի աշխարհ, որն այս կամ այն տեսանկյունից լինելու, գոյելու անհրաժեշտություն ունի: Ուտոպիան սոցիալական նպատակների իրագործման մեթոդներից է, որը ներառում է սպասումների, հույսերի ծովածավալ մի դաշտ: Այն երբեք չի չեզոքացնում կապն իրական աշխարհի հետ, յուրովի իդեալականացնում է դրա որոշ կողմեր՝ ներմուծելով բացակա տարրեր, որոնք չկան ներկայում: Ուտոպիան ընդլայնում է հասարակական գիտակցության սահմանները՝ նախապատրաստելով գիտակցությանն ընդունելու նոր հարացույց և հաստատելու այլընտրանք: Իդեալներ կերտող, երևակայական գեղումներով լցված ուտոպիան ժամանակի ընթացքում ազատվեց գեղարվեստականությունից և փոխարկվեց սոցիալ-քաղաքական ուտոպիական նախագծերի: Ուտոպիայում հասարակական իդեալի վերակերտում կա. անհրաժեշտ իդեալները, որոնք մարդու սեփական կյանքի գնահատականն են, այստեղ հերքվում են կամ ներկայացվում նորովի: Քաղաքական ասպարեզում այս գործընթացը բավականին մոտեցրեց ուտոպիայի և գաղափարախոսության սահմանազրեքը՝ հաճախ բաժանման անշոշափելի գծեր դնելով դրանց միջև: Մի բան պարզ է՝ երկուսն էլ անավարտ նախագծեր են, որոնք սպասում են իրենց ապագայի վերջնակետին: Եթե ժամանակակից աշխարհում տեխնիկական ուտոպիաներն ավելի քան իրագործվել են, և անգամ հարց է այսօր մարդկային միտքն ու երևակայությունը հասցնում են արդյոք ապագայի համար կառուցարկել տեխնիկական այնպիսի նորույթ, որը դեռ բացակայում է, ապա այլ հարց է սոցիալ-քաղաքական ուտոպիան, որը՝ որպես ուտոպիական գիտակցության արտացոլում, երբեմն մնում է

անկատար նախագիծ կամ հայտնվում իրականության և երևակայության միջանցքում խցկված:

Գաղափարախոսությունը մարմնավորում է ստանում քաղաքական և սոցիալական ինստիտուտներում: Այն սուբյեկտի տեղն ու դիրքն ապահովող պրակտիկաների և դիսկուրսների միջոցով որոշարկում է սուբյեկտի բնույթը սոցիալական փոխհարաբերությունների մեջ, ինչպես նաև, պայմանավորված այդ տեղով, նրա համար իմաստավորում աշխարհը: Գաղափարախոսությունը ներքնայնացվում և դառնում է սոցիալական կյանքի բոլոր բաղադրիչների անբաժանելի տարրը՝ հայտնվելով ամենուր՝ սկսած ամենաստորին տիրույթից (գովազդ, հեռուստատեսություն, համացանց, ֆիլմեր, շոուներ) մինչև քաղաքականություն: Հարկ է նկատել, որ պետությունը գործառում է նաև գաղափարախոսության կիրառման շնորհիվ: Քաղաքականությունն ու գաղափարախոսությունը կապված են փոխադարձորեն: Առավել քան նկատելի է, որ գաղափարախոսությունը պայմանավորում, պատճառավորում է քաղաքականությունը, քաղաքական դաշտում տեղի ունեցող վայրիվերումները: Այս դիտանկյունից քաղաքականությունը տվյալ գաղափարախոսությունը կրող համայնքի գործողությունն է՝ գաղափարախոսությունը տարածելու, իրենց շահերը հաստատելու համար: Ստացվում է այնպես, որ քաղաքականության մեջ գործող սուբյեկտը կարիք ունի գաղափարախոսության՝ որպես գործողությունները ուղղորդող, կենտրոնացնող երևույթի:

Շատ հաճախ գաղափարախոսությունը հենվում է գիտական գիտելիքի, սոցիալական փաստերի վրա, թեպետ սոսկ այն խմբի դիտանկյունից, որի շահերը ներկայացնում է: Եվ քանի որ գաղափարախոսության մեջ նույնպես կա իդեալ և միտվածություն դեպի ապագան, ուստի այն պարունակում է ուտոպիականը՝ ստեղծելով անխուսափելի համամիասնություն: Իրականության և ցանկալիի միախառնումը հարթեցնում է գաղափարախոսության և ուտոպիայի միջև եղած տարածությունը, իսկ վերոնշյալներն իրենց հերթին փորձում են երկուստեք կառուցարկել այն, ինչը դեռ գոյություն չունի, բայց ցանկալի է, որ լինի: Պարզապես դրանք հնարավորությունների տեսանկյունից միշտ շահերի բախում են ունենում: Մյուս կողմից՝ և՛ ուտոպիան, և՛ գաղափարախոսությունը ժամանակակից առասպելի տեսք են ստանում, քանի որ ինչպես վերջինս, դրանք ևս ներկայանում են դրական և բացասական կողմերով՝ ուղղված հետ՝ դեպի անցյալը, և միտված դեպի ապագան: Անժխտելի է, որ որևէ իրողություն վերածվում է առասպելի, հենց որ մարդը դրան մեծ նշանակություն, խիստ կարևորություն է հաղորդում: Հետևաբար՝ գաղափարախոսությունը նույնպես կարող է վերածվել քաղաքական առասպելի, որի դերն ու նշանակությունը տարբեր հասարակություններում զանազանվում են: Հասարակությունը կարիք ունի գաղափարախոսությունների և ուտոպիաների, քանի որ դրանցում

առաջադրվում են սոցիալական կյանքին վերաբերող և սոցիումի զարգացման հեռանկարները ներկայացնող բազում հարցերի պատասխաններ:

Գաղափարախոսությունն ու հասարակական հոգեբանությունը խիստ փոխկապակցված և միախառնված են, դրանցից առաջինն անպայմանորեն ներգործում է վերջինիս վրա և խորը փոփոխությունների ենթարկում այն: Սրանք կարծես հասարակական գիտակցության բանական և զգայական կողմերը լինեն: Գաղափարախոսությունը սոցիալական խմբի շահերի դիտանկյունից ներկայացվող արժեքների, իդեալների, նորմերի համախումբ է: Դրա վերաբերյալ տեսական վերլուծություններն առավել մեծ թափ առան հատկապես Կ. Մարքսից սկսած: Ի սկզբանե գաղափարախոսությունը (idea, logos) 18-րդ դարում օգտագործվում էր որպես գաղափարների համակարգերն ուսումնասիրող գիտության ճյուղ, սակայն Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը դասակարգային պայքարի տեսության շրջանակներում փոխեցին դրա իմաստը: Գաղափարախոսության նկատմամբ այդ շրջանի մտտեցումները հիմնականում բացասական բնույթի են և նույնացնում են այն գիտակցությունը մթագնող երևույթների հետ: Գաղափարախոսությունը համարվում էր իրականությունը քողարկելու լավագույն միջոցը, այսինքն՝ այն, խեղաթյուրելով իրականությունը, առաջ է քաշում ոչ թե իմբին, հասարակությանն անհրաժեշտ իրական շահերը, այլ թվացյալ: Լ. Ալտյուսերի կարծիքով, գաղափարախոսությունը մարդուն իր գոյության պայմանները ներկայացնում է երևակայական ձևով²: Բացասական տրամադրվածությունն այդ երևույթի նկատմամբ պայմանավորված էր այն հանգամանքով, որ դեկավարող դասկարգը վեհացնում և բարձրացնում էր այն գաղափարական հենքը, որը նպաստում էր իր իշխանության պահպանմանն ու ամրապնդմանը: Գաղափարախոսության համոզմունքները հետևողականորեն ներարկվում են հասարակությանը՝ համոզելով մեծամասնությանը, որ ամեն բան լավ է և պետք է շարունակվի նույն կերպ, որ գաղափարները, արժեքներն ու մտածողության կերպը, որը հարմար է իշխող խավին, համապատասխանում է և անհրաժեշտ է մնացյալին նույնպես: Այլ խոսքով՝ ըստ այս մտտեցման՝ մենք գործում ենք «գիտակցվածության» խաբկանքի ներքո. գաղափարական հոսքը ստիպողաբար տեղադրվում է տուփի վերածված մեր ուղեղներում՝ մղելով ցանկալի գործողությունների: Գաղափարախոսության ազդեցության շրջանակները շատ լայն են՝ առօրյա մանրուքներից մինչև լուրջ քաղաքականություն. սա լավ գործիք է հատկապես հմուտ ձեռքերում: Թ. Ադորնոյի պնդմամբ, երբ այդ տեսակի գործիքը հայտնվում է կոնկրետ մարդու կամ խմբի ձեռքում, միշտ էլ գործածվում է այլոց գիտակցությունը թուլացնելու, ճնշելու և ոչ թե հասարակության ազա-

² Տե՛ս **Альтюссер Л.** Идеология и идеологические аппараты государства // <http://magazines.russ.ru/nz/2011/3/al3.html> [10.12.2016]:

տագրման և դրական փոփոխություններ մտցնելու համար: Ըստ այդմ՝ նա գտնում է, որ կապիտալիստական հասարակությունում ցանկացած ապրանք վաճառված լինելու, կապիտալի աճի և օգուտի համար է, ոչ թե մարդկային պահանջմունքների բավարարման: Հետևաբար՝ ամեն բան, անգամ մշակութային ոլորտը բիզնես են գաղափարախոսության քողի ներքո:

Մեկ այլ տեսաբանի՝ Հ. Արենդթի կարծիքով, «գաղափարախոսությունն այն է, ինչ անունն է մատնանշում՝ գաղափարի տրամաբանություն (logic of an idea)»³: Նա ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ գաղափարախոսությունները, ելնելով իրենց համապատասխան գաղափարների տրամաբանությունից, խաբկանք են ստեղծում, թե դրանք տիրապետում են պատմության ողջ ընթացքին և դրա թաքնված կողմերին, բացատրություն ունեն ամեն բանի համար, որ կարող են ցուցադրել անցյալի չերևացող անցքերը, ամբողջությամբ պարզաբանել ներկայի հիմնախնդիրներն ու ապագայի անորոշությունները լուծելու ուղիներ առաջադրել⁴: Ստացվում է, որ գաղափարախոսությունը հավակնում է միակ աշխարհայացքի ընդգրկունության. շատերի փոխարեն՝ մեկը, որը նախօրոք տեղյակ է կյանքի նախապատրաստած հնարավոր փորձառություններին: Հ. Արենդթը սա հատկապես ընդգծում էր ամբողջատիրության համար՝ կարծելով, որ գաղափարախոսության հենց այդ կողմն ամենաշատն օգտագործեցին Հիտլերն ու Ստալինը և անկյունաքարային դարձրին իրենց ամբողջատիրության համար⁵:

Կ. Յասպերսը նույն տրամադրվածությամբ նկատում է. «Գաղափարախոսությունը գաղափարների կամ պատկերացումների համակարգ է, որը ծառայում է մտածող սուբյեկտին որպես բացարձակ ճշմարտություն, որի հիման վրա նա ստեղծում է աշխարհի իր սկզբունքների համակարգն ու որոշարկում իր դիրքն այդտեղ այնպես, որ դրանով նա ինքնախաբեություն է իրականացնում, որն անհրաժեշտ է գաղափարախոսությունն արդարացնելու, նրա իրական շահերը քողարկելու համար»⁶: Ըստ նրա՝ սրա հետևանքով, եթե որևէ մտածողություն համարվում է գաղափարախոսություն, այն միանգամից նույնացվում է կեղծիքի, մոլորության հետ: Քաղաքական գաղափարախոսությունը մի տեսակ հավատամքի, նախահամոզումների է վերածվում: Այն հավատալիքների դաշտ է մտնում, քանի որ առաջարկվող գաղափարները, մոտեցումներն ընդունվում են առանց փորձնական, բանական հիմնավորման: Ըստ էության՝ քաղաքական ոլորտում ոչինչ, այդ թվում և գաղափարախոսությունը, չի կարող լինել չեզոք, առանց սոցիալա-

³ Հ. Արենդթ, Մենք՝ փախստականներս, Եր., 2016, էջ 69:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 69:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 72:

⁶ Ясперс К. Смысл и назначение истории. М., 1991, с. 146.

կան խմբերի շահերի հետ հարաբերակցության: Գաղափարախոսությունը սոցիալական խմբի շահերն առաջ մղելու, քաղաքական գործունեությունն արդարացնելու լավագույն միջոցներից է: Գաղափարախոսական մտածողության պարտադրումը վերացնում է իրականության հետ կապն ու չեզոքացնում է մարդկանց համար փաստի և հորինվածքի, իրականի և խաբկանքի միջև տարանջատումը⁷:

Գաղափարախոսության կեղծությունը երկակի բնույթ ունի. օրինակ՝ եթե մարդը միշտ հավատացել է որևէ գաղափարախոսության, դիցուք՝ կոմունիստականին, դա չի նշանակում, որ նա կեղծ է ապրել: Այն կեղծ է այն պարագայում, երբ ըմբռնվում է որպես իմաստների համախումբ, որն աշխարհը թյուր կերպով է իմաստավորում՝ աղավաղելով այդտեղ տիրող հարաբերություններն ու ընդհանրապես սոցիալական իրականությունը: Լուսավորականությունն ու արդիականությունը հետևանքն էին այն բանի, որ մարդը գիտակցել էր իր մտածող էակ լինելն ու նաև այն, որ հենց ինքը կարող է իմաստներ ստեղծել: Իսկ երբ մարդը չի ունենում սեփական դիսկուրս, նա դառնում է կեղծ գիտակցության կրող, վերջինիս էլ սնում է գաղափարախոսությունը: Գաղափարախոսությունը գերներծծված է քաղաքական գաղափարներով և ձգտում է էլ ավելի ամրապնդել իշխող համակարգի դիրքերը: Պարտադիր չէ, թերևս, որ գաղափարախոսությունը կեղծ կամ ճշմարիտ գաղափարներ, պնդումներ ներառի. հաճախ հասարակության մեջ արդեն իսկ առկա արժեքային կողմնորոշիչները կարող են այն խեղաթյուրել և հանգեցնել բացասական հետևանքների:

Գաղափարախոսություններն ստեղծվում են ինքնաբերիկ՝ առաջարկելով կաղապարներ, հաճախ մարդկային գիտակցությունը ցանկություն էլ չունի դուրս գալու: Գաղափարախոսությունն անհրաժեշտ է չտեսնելու համար այն, ինչն իրականում գոյություն ունի: Ստացվում է այնպես, որ շատ հաճախ մարդու ներքին խաբկանքներն ավելի են իրեն դուր գալիս, քան իրական իրերի կարգը: Մովորաբար գաղափարախոսությունը վերածվում է պետական առասպելի, որը շատ լավ մտնում է, ներծծվում հասարակության պատկերացումների մեջ:

Գաղափարախոսության և ուտոպիայի նկատմամբ մոտեցումները շատ բազմազան են. տարբեր մտածողներ սեփական տեսանկյունից են ներկայացրել դրանց դերն ու նշանակությունը հասարակական կյանքում: Նրանցից մեկն էլ Կ. Մանհեյմն է, ով առաջադրել է ուտոպիայի և գաղափարախոսության տարանջատման յուրօրինակ մեխանիզմ, որն այլ դիտանկյուն մտցրեց արդեն իսկ առկա ուսումնասիրությունների մեջ: Նա առանձնացնում է կեցության նկատմամբ այնկողմնային պատկերացումների երկու խումբ՝ գաղափարախոսություն և ուտոպիա: Բացատրելով այնկողմնայնության իր ըմբռնումը՝ նա նկատում է.

⁷ Տե՛ս **Հ. Արենդթ**, նշվ. աշխ., էջ 77:

«Իրապես գոյություն ունեցող» կենսական ցանկացած կառույց պարուրված է պատկերացումներով, որոնք հարկ է անվանել «կեցության նկատմամբ այնկողմնային», «անիրական», քանի որ տվյալ հասարակական կարգում դրանք չեն կարող իրագործվել, ինչպես նաև այն պատճառով, որ տվյալ սոցիալական կարգի պայմաններում անհնար է դրանց համապատասխան ապրելն և գործելը»⁸: Այսինքն՝ դրանք ոչ մի կերպ չեն համապատասխանում այդ շրջանում առկա կենսական կառույցներին: Պատմական գործընթացի մեջ ուտոպիականն ու գաղափարախոսականը չեն հակադրվում մաքուր վիճակով: Ուտոպիայի և գաղափարախոսության տարբերակման համար կարելի է առանձնացնել մի ստույգ չափորոշիչ՝ «իրականացումը»: «Գաղափարախոսություններ են այն գաղափարները, որոնք, ինչպես արդյունքում պարզ դարձավ, որպես քողարկող պատկերացումներ, պարզապես անցել են վերացող կամ ձևավորվող հասարակական կարգի վրայով, իսկ հարաբերական ուտոպիաներ են այն գաղափարները, որոնք գալիք հասարակական կարգում կյանքի են կոչվել»⁹: Ուտոպիայի ըմբռնումը պարտադիր կապված է իշխող և այդ խավի հետ հակասություններ ունեցող մարդկանց ընկալումների հետ: Տվյալ սոցիալական համակարգը ներկայացնողների համար ուտոպիական են բոլոր այն պատկերացումները, որոնք իրենց ընկալումների դիտանկյունից անհնար է իրագործել: Հեղինակը չի ժխտում, որ ուտոպիաները նույնպես կարող են սկզբունքորեն անիրագործելի լինել, բայց կարևոր է համարում, որ կոնկրետ սոցիալական կարգի աշխարհընկալման համար իրենց պատկերացումներին չհամապատասխանող գաղափարները միշտ էլ կլինեն ուտոպիական՝ անիրականանալի լինելու տեսանկյունից: Ըստ էության՝ գաղափարախոսությունն իշխող և առկա սոցիալական իրադրությունից գոհ խավինն է, իսկ ուտոպիան՝ ոչ իշխանական, նորին ձգտող և այլ սպասումներ ունեցող, կարգի դեմ պայքարող խավինը: Եվ ուրեմն, գաղափարների ուտոպիականությունն ընդգծում են իշխող շերտի ներկայացուցիչները, ովքեր սոցիալական կարգի հետ լրիվ համաձայն են, իսկ գաղափարախոսականությունը՝ վեր բարձրացող խավի անդամները, ովքեր դեմ են առկա կարգերին և իրենց զբաղեցրած դիրքին¹⁰: Ըստ Կ. Մանհեյմի՝ ուտոպիական կարելի է համարել իրեն շրջապատող «կեցության» հետ անհամապատասխանության մեջ գտնվող այն կողմնորոշումը, որն իրականանալիս քանդում է տվյալ ժամանակահատվածում տիրող իրերի կարգը¹¹, այսինքն՝ այն գոյություն ունեցող կեցության կազմաքանդումն է: Այնկողմնայնությունը հատկապես դրսևորվում է, երբ արդեն իսկ եղածը չի վերարտադրվում, այլ առաջ է

⁸ Мангейм К. Идеология и утопия. М., 1994, с. 166.

⁹ Նույն տեղում, էջ 175:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 174:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 164:

քաշվում նորը: Նա մատնանշում է այն հանգամանքը, որ քանի դեռ կոնկրետ պատմական կեցությունն այնկողմնայնացնող պատկերացումները միաձուլվում են այդ շրջանի աշխարհի պատկերի հետ, դրանք ուտոպիաներ չեն, այլ գաղափարախոսություններ և վերափոխիչ ազդեցություն չունեն:

Ընդհանրացնելով ասվածը՝ Կ. Մանհեյմը գաղափարախոսություն է համարում կեցության նկատմամբ այնկողմնային այն պատկերացումները, որոնք փաստացի երբեք չեն իրագործվում, չնայած առանձին մարդիկ հաճախ լրիվ անկեղծորեն առաջնորդվում են դրանցով՝ որպես իրենց վարքի դրդապատճառ, սակայն իրականացման ընթացքում գաղափարախոսությունները, որպես կանոն, խեղաթյուրվում են¹²: Ինչպես վերը նշվեց, ուտոպիաները նույնպես կեցության նկատմամբ կրում են այնկողմնային բնույթ, քանի որ դրանք ևս հիմնված են իրական կեցության մեջ գոյություն չունեցող տարրերի վրա, սակայն դրանք գաղափարախոսություններ չեն, քանի որ իրենց հակազդեցությամբ կարողանում են վերափոխել պատմական իրականությունը՝ մոտեցնելով այն իրենց պատկերացումներին¹³: Հեղինակը «ուտոպիա» եզրույթն օգտագործվում է հարաբերական իմաստով, այսինքն՝ ուտոպիա, որը հաստատված սոցիալական կարգի ներկայացուցիչների համար թվում է բացարձակ անիրականանալի: Եվ քանի որ ուտոպիականի կոնկրետ սահմանումը միշտ պայմանավորված է միայն զարգացման որոշակի փուլով, ապա այսօրվա ուտոպիաները կարող են որևէ սոցիալական տարածությունում դառնալ վաղվա իրականությունը: Կ. Մանհեյմի համար ուտոպիան հնարավոր փոփոխության հույս է, իսկ գաղափարախոսությունը՝ քաղաքական գաղափարներով սնուցվող և պետական համակարգից ոգեշնչված երևույթ: Ուտոպիան միտված է քանդելու իշխող իրերի կարգը:

Իհարկե, անհամեմատելի են տարբեր դարաշրջանների հասարակական պատկերացումները, որոնց համապատասխան փոխվում են նաև ակնկալիքներն ու պահանջումները սոցիալական աշխարհի կառուցարկումից: Կարևոր է, որ այդ կառուցարկվող սոցիալական աշխարհը հասարակության համար լինի հասկանալի և կանխատեսելի: Գաղափարախոսությունները չեն լինում մեկընդմիջտ տրված և հավերժ, ժամանակի հոսքում փոփոխվում են սոցիալական իրականության վերաբերյալ պատկերացումները, պահանջները, քաղաքական շահերն ու նպատակները, ինչի հետևանքով ժամանակին տիրապետող գաղափարախոսությունը դառնում է մնացորդային, այսինքն՝ դրանից մնում են միայն որոշակի տարրեր, որոնք դեռ պահպանվում են ներկայում (օրինակ՝ խորհրդային վերապրուկները մեզանում), իսկ նորերը դեռ ձևավորման փուլում են և ընթացքում տեղավորվում են տիրա-

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 166:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 167:

պետող գաղափարախոսության մեջ կամ դառնում տիրապետող: Տարբեր գաղափարախոսությունների միջև պայքարը մշտապես շարունակվում է, իշխանության ձգտող խավն էլ ավելի գայթակղիչ և համոզիչ գաղափարախոսություններ է ներկայացնում, իսկ արդեն իշխողն իր հարատևությունն ու դիրքն է փորձում պահպանել՝ զարգացնելով իր առաջարկությունների համակարգը: Իշխող խավը ջանք չի խնայում իմաստաստեղծ գործառույթը պահպանելու համար, այսինքն՝ իրականացնում է սոցիալական իրականության կողմերի վերասահմանման գործառույթ:

Ս. Ժիժեկն առանձնացնում է գաղափարախոսության երեք մակարդակ՝ գաղափարախոսությունը որպես ուսմունք, որպես համոզմունք և որպես ծես: Գաղափարախոսությունն ուսմունք է այնքանով, որքանով այն մեկնաբանող և վերլուծող որոշակի տեսություններ կան: Օրինակ՝ ազատականությունը, որի հիմքը անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկի որոշ փիլիսոփայական հայացքներն են: Այնուհետև, մի փոքր ավելի ցածր մակարդակում գաղափարախոսությունը վերածվում է որոշակի կառույցների, այսինքն՝ դառնում է հենարան որոշակի համոզմունքների համար: Ազատականության դեպքում դա կլինեն ազատ շուկան, ազատ մամուլը, ժողովրդավարական ընտրությունները և այլն: Եվ վերջապես՝ ծեսի մակարդակում, երբ գաղափարախոսությունը ներքնայնացվում, դառնում է մեր ինքնությունը: Որպես ազատական աշխարհայացքի ներքնայնացման օրինակ նա մատնանշում է, թե ինչպես է մերօրյա հասարակությունում մարդը կարծում, որ ինքն ազատ և ինքնուրույն մտածող անհատ է:

Շրջապատող իրականության հերքումն ու վերակառուցումն ուստոպիայի մենաշնորհներից են: Էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ ուստոպիան նպաստում է սոցիալական իրականության մտային պատերի փլուզմանը, ինչի շնորհիվ այն հաճախ նախապատրաստում է հեղափոխության, սկզբնապես գոնե գիտակցության ոլորտում: Այս հանգամանքը նպաստում է գիտակցության հորիզոններում նոր սոցիալական իրականության կառուցարկմանը, ինչը կարող է հանգեցնել իրական կյանքում կատարվող գործողությունների: Ձևավորվելով հակասությունների հորձանուտում՝ ուստոպիաները ներկայացնում են կայունության մոդելներ, որոնք ներկայի միջով ձգվում են դեպի ապագա:

Ուստոպիան իրականությունը հարցականի տակ դնող, այլ սոցիալ-քաղաքական մթնոլորտ ստեղծող, դեպի հեռուն տեսնելու հնարավորություն ընձեռող սոցիալական նախագիծ է, ինչը հաճախ հնարավոր չէ գտնել գաղափարախոսության նախագծում, որն ապահովում է որևէ ծրագրի իրագործումը «այստեղ և հիմա»: Այս պարագայում էական չէ, թե ինչպիսի մեթոդներով է դա արվում՝ մանիպուլյացիայի՞, թե՞ իրական հավատի և հույսի ներշնչման շնորհիվ. լավի և վատի միջ-

նագծի աներևույթ լինելը հատուկ է գաղափարախոսությանը, որը կատարում է իր գործառնությունն առավելապես ներկայում, ոչ թե ապագայում:

Ներկան տարուբերելու և նոր կայունությունն արարելու ակնկալիքով՝ աշխարհի պատկերը փոխող նախագծերը դեռ ունեն ասելիք: Ուտոպիան իրականությունը, աշխարհը փոխելու խնդիր է առաջ քաշում, իսկ գաղափարախոսությունը, պահպանելով եղածը, նորոգում է միայն որոշ անցքեր՝ այնուամենայնիվ թողնելով բաց հատվածներ, որոնցում միջանցիկ քամին կարող է տեղաշարժեր կատարել այս կամ այն ուղղությամբ՝ կախված տվյալ գործող ուժի շահի բնույթից:

Ուտոպիայի պարագայում անհնարին է բավարարվել ներկայով, իսկ ներդաշնակությունն ապահովելը ենթադրում է թեկուզ առկայի հետ անհամաչափելի, բայց ապագայի կոնկրետ տեսլականի ստեղծում: Այն հարցը, թե ապագայի այդ **տեղը (topos)** կմնա **տեղ**, որն այդպես էլ իրականում չի լինի, թե կփոխարկվի երջանիկ **տեղի**, որն այս կամ այն չափով համապատասխանում է այն աշխարհին, որը **պետք է լիներ** և ակնկալվում էր գոնե մեծամասնության կողմից, ժամանակի և եղած հնարավորությունների ճիշտ օգտագործման ու կանխատեսման խնդիր է: Սրան ի հակադրումն՝ գաղափարախոսությունն առկա հնարավորություններն ամեն կերպ ծառայեցնում է որևէ կոնկրետ նպատակի շահերին՝ միաժամանակ չառաջարկելով որևէ այլընտրանք: Քաղաքակրթությունն ամեն բան արել է այլընտրանքներն ու թվացյալ անիրագործելին հերքելու և բնաջնջելու համար, սակայն առանց դրա անհնար է պատկերացնել մարդուն՝ կանգնած պատմության բեկումնային շրջադարձերի շեմին, որոնց խառնարանում է՛լ ավելի են երևում պատմության ընթացքը փոխած և փոխել ցանկացող գաղափարները:

Առանց գաղափարախոսության հենակների՝ դեպի աշխարհի հանվող հայացքը չափազանց հիասթափեցուցիչ կլիներ: Այն պետք է մարդուն իրականությունը սեփական ցանկությամբ մշուշապատելու համար: Ուտոպիան նույնպես ունի իդեալականացնող և իրականությունից հեռացնող բնույթ, սակայն միշտ իր առջև դնում է իրականությունը բացեիբաց ցուցադրելու խնդիր՝ փորձում է մարդու համար բացահայտել այն իրականությունը, որում նա ապրում է:

Նոր աշխարհ ստեղծելու մարդկային մղումը հավերժ է: Ներկան վիճարկելու և ապագայի տեսլական արարելու միջոցով իրականությունից մեկ քայլ վեր կանգնելն ու այն վերակառուցարկելը կյանքի շարունակման գրավականն են: «Վիճարկումը իրականությունից դուրս ձևավորում է իդեալական աշխարհի մոդել (ուտոպիա), որի գոյության իրավունքի համար մարդիկ ինքնակամ զոհողությունների են դիմում»¹⁴:

¹⁴ **Է. Ա. Հարությունյան**, Համատեքստի հերթափոխը. վիճարկումը իբրև անհնարինի հաղթահարման կամազդակում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 2, Եր., 2016, էջ 15:

Կ. Մանհեյմի դիտարկմամբ՝ եթե մի օր աշխարհում բացարձակապես չլինեն գաղափարախոսություններ և ուտոպիաներ, ապա չի լինի նաև զարգացում, ամեն բան ավարտված կլինի, և տեղի կունենա կրկնօրինակման հարատև գործընթաց, ինչը վերջնականապես կսպանի մարդկային կամքը: Նորը արարելու, գեղագիտական աշխարհակերտմամբ առաջ նայելու և գեղեցիկը վերակերտելու կամքը կանհետանա:

Ուտոպիաների և գաղափարախոսությունների նկատմամբ հավատն ու սպասումներն ավելի ընդգծված էին արդիականության շրջանում, իսկ մեր օրերում՝ հետարդիականության փուլում, արդեն նվազ վստահություն կա դրանց հանդեպ, քանի որ այդ ծրագրերի որոշակի իրականացում և տապալում է տեսել մարդը, ով այլևս չի ցանկանում նորի նախագծում, քանի որ անդադար ստիպված է ապրել նոր իրականությունում, որին չի հասցնում հարմարվել և իմաստավորել կատարվողը: Թեև ուտոպիաների և գաղափարախոսությունների կարիքն այս իմաստով կորչում է, բայց դրանք արարելու մղումի պարպումը հանգեցնում է կենսիմաստային կողմնորոշիչների կորստին, պատմական որևէ ուղով ընթանալու անորոշությանը: Հետարդիականությունը հերքում և անվստահություն է հայտնում մետապատումների նկատմամբ, որոնք ստանձնում են ներկայի իմաստաստեղծ դերը, տալիս դրա վերաբերյալ համընդգրկուն պատկերացումների մի համակարգ: Սակայն, որքան էլ հերքենք դրանց դերը, միաժամանակ պետք է ընդունենք, որ ներկան մեզանում կառուցարկված է որոշակի պատումների միջոցով:

Ցանկացած վերջ ներունակ է նորը ծնելու, իսկ այդ ծնունդի համար նոր այլընտրանքներ են անհրաժեշտ: Հնարավորի և անհնարի նի փնտրտուքներում մարդկային ցեղը երբեք կանգ չի առնում, գուցե այդ սահմանագիծը երբեք էլ չպետք է հստակ լինի, որպեսզի նոր բացվող հորիզոնների լույսը միշտ տեղ ունենա ներս թափանցելու:

Բանալի բառեր - ուտոպիա, գաղափարախոսություն, ուտոպիական նախագիծ, սոցիալական իրականություն, ապագա, այլընտրանք, սոցիալական նախագիծ, հասարակական գիտակցություն

МЕРИ МИКАЕЛЯН – Соотношение идеологии и утопии. – Для организации и регулирования жизни за многие столетия разработаны многочисленные проекты, которые так или иначе влияют на мировоззрение человека и его жизненную позицию. Попытки осмыслить социальную реальность всегда соотносятся с представлениями о том, какой она должна быть. Этим и обусловлены всевозможные утопии и идеологии. В статье рассматриваются сходства и различия утопии и идеологии, их место и роль в общественной жизни. Та и другая как мешают, так и помогают человеку ориентироваться в общественно-политической жизни.

Ключевые слова: утопия, идеология, социальная реальность, будущее, альтернатива, социальный проект, общественное сознание

MERI MIKAYELYAN – *The Correlation of Ideology and Utopia.* – For centuries, numerous projects have been raised for the organization and regulation of life which somehow affect human's perception of the world and his position in life. The attempts to comprehend the social reality are always mixed with ideas on what it **should be**. And from here derives continuous highlighted utopias and ideologies uninterrupted parade. In the article, similarities and differences of utopia and ideology, as well their place and role in the social life have been considered. Simultaneously, utopia and ideology both prevent and assist the human and society in orientating through becoming a landmark in the social and political life.

Key words: *utopia, ideology, utopian project, social reality, future, alternative, social project, social consciousness*

**ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆԻ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԵԻ
ՓԻԼԻՍՈՓՈՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ՄԻԼԵՆԱ ՄԵՍՐՈՊՅԱՆ

19-րդ դարի գերմանացի հանճարեղ մտածող Ֆրիդրիխ Վիլհելմ Նիցշեի փիլիսոփայությունն ուշադրության կենտրոնում է արդեն ավելի քան հարյուր տարի, և դժվար է գտնել որևէ մեկ այլ հեղինակ, որի ազդեցությունն այդքան մեծ լինի նաև արդի իրականության վրա, ընդ որում՝ ոչ միայն գիտական շրջանակներում, այլև առհասարակ մշակութային դաշտում: Նիցշեի ու նրա փիլիսոփայության մասին այսօր խոսվում և գրվում է այնքան շատ, որ կարող է տպավորություն ստեղծվել, թե այն արդեն լավ ու հիմնովին ուսումնասիրված և պարզաբանված է: Այդուհանդերձ, նրա փիլիսոփայական ժառանգության շատ հայեցակարգեր անգամ բավականաչափ լուսաբանված չեն. դրանց թվին են պատկանում, առաջին հերթին, հենց նրա գեղագիտական պատկերացումները: Նիցշեի գեղագիտության ուսումնասիրությունը ժամանակակից գեղագիտության ամենաայժմեական խնդիրներից մեկն է, քանի որ «գերմանացի փիլիսոփան առաջինն էր, ով զգաց, որ միայն դասական ռացիոնալ ճանաչողության միջոցներով կեցության երևույթները հնարավոր չէ ճանաչել ու բացատրել և շրջադարձ կատարեց մեր մտածողության մեջ՝ հոգուտ աշխարհի գեղագիտական ընկալման»¹: Այսօր գոյություն ունի ընդգրկուն «նիցշեագիտություն», որի շրջանակներում, սակայն, գերմանացի փիլիսոփայի չափազանց հարուստ փիլիսոփայական ժառանգությունից առավել մեծ ուշադրություն է դարձվել նրա բարոյագիտական, մշակութաբանական ու կրոնագիտական հայեցակարգերին, մինչդեռ գեղագիտական պատկերացումների մասին հիշատակվում են շատ հպանցիկ, թեև վերջիններս ոչ պակաս, երբեմն նույնիսկ ավելի կարևոր ու սկզբունքային են նրա ողջ փիլիսոփայությունը հասկանալու համար: Էլ ավելի քիչ են այն հետազոտությունները, որոնցում փորձ է արված համակարգային մոտեցում ցուցաբերել Նիցշեի փիլիսոփայության հանդեպ, այսինքն՝ ոչ թե առանձին-առանձին մեկնաբանել նրա առաջադրած այս կամ այն հասկացությունը, հայեցակարգը կամ հիմնախնդիրը, այլ վերլուծել դրանք նրա ողջ փիլիսոփայական ուսմունքի համատեքստում՝ ցույց տալով դրանց օրգանական ներքին կապը: Այս բացը հատկապես ակնառու է հենց Նիցշեի գե-

¹ Калтышев С. В. Метафизика искусства Ф. Ницше. М., 2007, с. 11.

ղագիտության ուսումնասիրության տեսանկյունից, ինչն էլ պայմանավորում է սույն հետազոտության անհրաժեշտությունն ու արդիականությունը: Հոդվածը նվիրված է Ֆրիդրիխ Նիցշեի փիլիսոփայության մեջ գեղագիտականի ու բարոյագիտականի կապի ու փոխհարաբերության վերլուծությանը: Ի մասնավորի, այն հարցին, թե ինչ դեր, նշանակություն ու ազդեցություն են ունեցել նրա վաղ շրջանի գեղագիտական պատկերացումներն իր ուշ շրջանի բարոյագիտության առանցքային գաղափարների ու հիմնախնդիրների ձևավորման և կայացման գործընթացում:

Նիցշեի գեղագիտական պատկերացումները հանգամանալից շարադրված են նրա վաղ փուլի կենտրոնական աշխատության՝ «Ողբերգության ծնունդը երաժշտության ոգուց կամ հելլենիզմն ու վատատեսությունը» գրքի մեջ: Շատ հետազոտողների կարծիքով, այս գիրքը ոչ միայն Նիցշեի ամենակարևոր երկերից է, այլև սկզբունքային նշանակություն ունի ողջ գեղագիտության պատմության համար: Ստեղծագործության այս վաղ կամ առաջին փուլը (1869-1876 թթ.) կարելի է բնորոշել որպես բանասիրությունից փիլիսոփայության անցման շրջան, որի ընթացքում Նիցշեն զբաղեցնում էր Բազելի համալսարանի դասական բանասիրության արտակարգ պրոֆեսորի պաշտոնը և մեծ մասամբ զբաղվում էր հունա-հռոմեական հեղինակների տեքստերի ուսումնասիրությամբ: Սակայն արդեն այս ժամանակաշրջանում նա սկսել էր հստակ գիտակցել, որ ցանկացած բանասիրական հետազոտության ընթացքում ստացված գիտական նվաճում կարիք ունի փիլիսոփայական իմաստավորման, այլ կերպ ասած՝ ինքնին որևէ տեքստի վերլուծությունն աննպատակ է, եթե դրա արդյունքների հիման վրա չեն արվելու համապատասխան փիլիսոփայական եզրակացություններ: Նրա մտածողության մեջ տեղի ունեցող այս շրջադարձի մասին է վկայում հատկապես այս տարիների իր նամակագրությունը: Այսպես, 1870 թվականի հունվարին իր ընկեր Էրվին Ռոդեին ուղղված նամակում նա գրում է. «Գիտությունը, արվեստը և փիլիսոփայությունն այնքան ուժեղ են միահյուսվել իմ մեջ, որ ես ցանկացած պարագայում ստիպված կլինեմ երբևէ կենտավրոս ծնել»²: «Ողբերգության ծնունդը երաժշտության ոգուց» ստեղծագործությունն էլ հենց եղավ այդ կենտավրոսը: Եվ նա միանգամայն ճիշտ էր՝ անվանելով այս ստեղծագործությունը կենտավրոս, քանի որ միավորել է այստեղ բազմաբնույթ տարրեր, որոնցից թերևս բանասիրությունը հանդես է գալիս արդեն առավելապես որպես գործիք, որի օգնությամբ հեղինակն անտիկ դասական տեքստերի մեկնաբանությունի փորձում է հասկանալ իրեն ժամանակակից դարաշրջանը: Գրքի էկլեկտիկ բնույթն առաջին հայացքից որոշակի շփոթմունք է առաջացնում, հատկապես Նիցշեի ավելի ուշ շրջանի գործերին ծանոթ մարդու մեջ, սակայն ուշադիր ու Նիցշեին

² Nietzsche F. Unpublished Letters., New York, 1959, p. 79.

իսկապես գիտակ ընթերցողը հեշտությամբ կառանձնացնի բոլոր ավելորդ տարրերը՝ սկսած Ի. Կանտի ու Ա. Շոպենհաուերի տերմինաբանությունից՝ մինչև Ռ. Վագների երաժշտագիտական դրույթները:

Գրքի լույս ընծայումը նշանավորվել է գործընկեր բանասերների բուն արձագանքով: Գերմանացի հետազոտող Կարլֆրիդ Գրունդերի՝ «Նիցշեի «Ողբերգության ծնունդը երաժշտության ոգուց» գրքի շուրջ բանավեճի մասին»³ աշխատանքում հավաքված են հետաքրքիր փաստեր այն թեժ քննարկումների վերաբերյալ, որոնք ծագել էին գրքի ու այնտեղ շոշափվող հիմնական հարցերի շուրջ: Հատկանշական է երիտասարդ բանասեր Ուլրիխ ֆոն Վիլամովից-Մելենդորֆի քննադատությունը, որը նա զետեղել է իր «Ապագայի բանասիրություն» գրքում: Առաջին հայացքից կարող է թվալ, թե խոսքը զուտ մասնագիտական վեճի մասին է, որը սրվում էր նաև որոշակի դպրոցի պատկանելության պատճառով. գերմանական բանասիրության երկու առաջատար դպրոցներից Նիցշեն ներկայացնում էր Ֆրիդրիխ Ռիչլի թևը, իսկ Վիլամովից-Մելենդորֆը՝ Օտտո Յանի: Սակայն իրականում ամեն ինչ ավելի բարդ էր: Բուն բանասիրությանն առնչվող հարցերն այստեղ անհամեմատ ավելի քիչ էին շոշափվում, մինչդեռ հիմնականում քննարկվում էին ընդհանրապես աշխարհայացքի ու մտածողության ոճին վերաբերող խնդիրներ: Հանձարեղ բանասեր Նիցշեն արդեն դադարել էր ուղղակի բանասեր լինելուց: Հենց սա էլ կոտակել էր Վիլամովիցը՝ գրելով. «Թող պարոն Նիցշեն ճամփորդի Հնդկաստանից Հունաստան, ինչպես իր Դիոնիսոսը, բայց թող իջնի ամբիոնից, որտեղից գիտություն է սովորեցնում, թող նրա ոտքերի տակ զբոսնեն վագրերն ու առյուծները, այլ ոչ թե Գերմանիայի բանասեր երիտասարդությունը»⁴: Այս տողերը միանշանակորեն բացահայտում են վիճաբանության արտամասնագիտական ուղղվածությունը: Իսկապես, Նիցշեի համար բանասիրությունը վաղուց դարձել էր միջոց այլ կարգի և նշանակության խնդիրներ բարձրաձայնելու համար: Երիտասարդ տարիներին Կանտով ու Շոպենհաուերով և առհասարակ փիլիսոփայությամբ տարված լինելը չէր կարող հետք չթողնել այս հանձարի կայացման գործընթացում: Անգամ Ռիչլը, ցնցված Դիոգենես Լաերտացու սկզբնաղբյուրների վրա Նիցշեի կատարած աշխատանքի բարձր վարպետությունից, չնկատեց նրա փիլիսոփայական ձիրքը, որը տեքստային սկզբնաղբյուրների վերլուծությունից ընթանում էր դեպի փիլիսոփայական, այնուհետև՝ կենսական ակունքների բացահայտում:

Եթե փորձենք մեկ նախադասությամբ արտահայտել «Ողբերգության ծնունդը երաժշտության ոգուց» ստեղծագործության մեջ Նիցշեի հնչեցրած առանցքային փիլիսոփայական հարցադրումը, ապա այն կձևակերպվի հետևյալ կերպ. «Ինչպե՞ս է հնարավոր դարձել անտիկ

³ **Gründer K.** Der Streit um Nietzsches Geburt der Tragödie, Hildesheim, 1969, s. 1- 40.

⁴ **Wilamowitz-Moellendorff U. von,** Zukunftsphilologie, Berlin, 1872, s. 17.

Հունաստանի ֆենոմենը»: Պատասխանելով այդ հարցին՝ նա հակադրվում է գերմանական փիլիսոփայական-գեղագիտական ողջ ավանդույթին, որը մասնավորապես գալիս էր Ֆ. Շելլինգից ու Յ. Վինկելմանից, և որի հետևորդներն էին անտիկ դարաշրջանի ուսումնասիրությամբ զբաղվող այն ժամանակների գրեթե բոլոր երևելի գիտնականները: Վերջիններս ընդհանուր առմամբ իդեալիստական ու ռոմանտիկական վերաբերմունք ունեին հին հունական մշակույթի նկատմամբ: Ընդունված էր այն տեսակետը, որ հույները զվարթ, կենսուրախ ու երջանիկ մի ժողովուրդ էին, իսկ նրանց ստեղծած մշակույթը և մասնավորապես արվեստը բնութագրվում էր որպես լավատեսական արժեքներ կրող ու տարածող մի ներդաշնակ համակարգ, որում իշխում էին կարգուկանոնն ու չափավորությունը:

Նիցշեն առաջինն էր, ով սկսեց խոսել այլ՝ ողբերգական Հունաստանի մասին. հենց այդպիսին է, ըստ նրա, եղել Հունաստանն իր պատմական զարգացման առավել ուժեղ և ծաղկուն շրջանում: Միայն անկման ու թուլության ժամանակ էր, որ հույները դարձան ավելի լավատես և սկսեցին ձգտել գիտական ճանաչողությանը. այս ամենը նա համարում է երկրի էլ ավելի խորացող ճգնաժամի ակնհայտ նախանշան: Նիցշեն պնդում է, որ չնայած մեր օրերում տարածված ժողովրդավարական ճաշակի բոլոր նախապաշարումներին՝ այդ լավատեսությունը, բանականության գերիշխանությունը, օգտապաշտությունը և ողջ ժողովրդավարությունը ոչ թե առողջության ու հզորության, այլ անկում ապրող ուժի և ծերության դրսևորումներ էին: Նա, ընդհակառակը, ընթերցողին է ներկայացնում հելլեններին բնորոշ ողբերգական մի կենսագրացողություն. իրենց եսասիրական նպատակներին հասնելու համար իրար ոչնչացնող, մշտատև պատերազմների աշխարհում ապրող մի ազգ, որն ավելի, քան այլք, կարիք ուներ տարբեր արվեստներ ու աստվածների պայծառ աշխարհ հորինելու՝ իր ամենօրյա դաժան գոյության տառապանքները հաղթահարելու համար: «Ինչպես կարող էր այդպիսի հիվանդագին աստիճանի զգայուն, իր ցանկություններում այդքան անհագուրդ, առ տառապանք այդչափ հակված ազգը դիմակայել գոյության դժվարություններին, եթե վերջիններս նրան ներկայացված չլինեին շլացնող գեղեցկությամբ լուսավորված աստվածների տեսքով: Այն նույն բնագործ, որ կյանքի է կոչում արվեստը՝ որպես կեցության լրացում ու ավարտ, ստեղծել է նաև օլիմպիական աշխարհը՝ որպես իրականությունը ձևափոխող հայելի»⁵: Ավելին, հենց այս ստեղծագործության մեջ էլ Նիցշեն ձևակերպում է իր այն հայտնի միտքը, որ կեցությունն արդարացված է հավերժության մեջ միայն որպես գեղագիտական երևույթ: Այլ կերպ ասած՝ կյանքը, լինելով տարերային ու իռացիոնալ ուժ, լավագույնս կարող է արտահայտվել միայն արվեստի մեջ՝ վերջինիս տակ հասկանալով ոչ միայն գեղարվեստա-

⁵ Nietzsche F. Werke: Kritische Gesamtausgabe, Band 1, Berlin and New York, 1967, s. 171.

կան գործունեությունը, այլև իրականության ցանկացած դրսևորում, որը հասնում է գեղագիտական արժեք լինելու մակարդակին, քանի որ միայն արվեստն է աշխարհը դարձնում արժանի գոյության: «Իսկապես,- գրում է երիտասարդ Նիցշեն,- որքան շատ եմ ես բնության մեջ նկատում, արձանագրում դրա ամենակարող գեղարվեստական բնագոյները, իսկ դրանցում կրքոտ ձգտում կա առ պատրանք, առ ազատագրում պատրանքի միջոցով, այնքան ավելի եմ զգում անհրաժեշտություն մետաֆիզիկական այն ենթադրության, որ յուրաքանչյուր գոյություն ունեցող, հավերժ տառապող և հակասություններով լի էակ իր վերջնական ազատագրման համար կարիք ունի հիացմունք առաջացնող տեսիլքների, ուրախ պատրանքների մշտական առկայության, ավելի ստույգ՝ կարիք ունի, որ դրանք անընդհատ կայանան ժամանակի, տարածության ու պատճառականության մեջ, այլ կերպ ասած՝ շրջապատեն նրան որպես անփոփոխ էմպիրիկ իրականություն»⁶: Գերմանացի մտածողը պնդում է, որ համաշխարհային պատմության մեջ միայն անտիկ շրջանի Հունաստանում են ոչ միայն գիտակցել այս փաստը, այլև իրենց ողջ մշակույթն ամբողջությամբ կառուցել դրա վրա:

Այս դրույթի հիմնավորման անհրաժեշտությունից էլ նա հանգում է ապոլլոնյան ու դիոնիսոսյան սկիզբների միասնության ու մշտական պայքարի մասին գաղափարին, որը, ըստ նրա, գոյություն ունեւ հին հունական մշակույթում, հատկապես դրա ծաղկման ամենավառ փուլում, և որն էլ, փաստորեն, եղավ այն հիմքը, որի վրա և որի շնորհիվ վերջինս բոլոր բնագավառներում այդպիսի աննախադեպ նվաճումներ արձանագրեց: Թեև այս հասկացություններն առաջին անգամ գործածել է Շելլինգը՝ բնութագրելու համար մարդու հոգեկանում առկա երկու հակադիր ուժերի՝ բանականի ու բնագոյայինի պայքարը, սակայն դրանց հոգեբանական, պատմական, մշակութային ու գեղագիտական առումներով առավել ամբողջական ու խորքային վերլուծությունը պատկանում է Նիցշեին:

Ինչպես հայտնի է, հունական պանթեոնում կային բազմաթիվ աստվածներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ հետևորդների իր բանակը, սակայն հազիվ թե նրանցից որևէ մեկը կարողանար հույների կյանքի վրա ունեցած ազդեցությամբ համեմատվել Ապոլլոնի ու Դիոնիսոսի հետ, որոնց դերն ու նշանակությունը պարզապես սահմաններ չեն ճանաչել, ինչի մասին են վկայում պատմական բազմաթիվ փաստեր: Ապոլլոնը՝ Ջեսի որդին, երկնային, արևային էակ է, որը Օլիմպոսում ժամանակի ընթացքում փոխարինում է անգամ Արևի աստված Հելիոսին: Դիոնիսոսը, ընդհակառակը, երկրայինի մարմնացումն է, պտղաբերության աստվածը, բուսականության, հողագործության, խաղողի ու

⁶ Նույն տեղում, էջ 201:

գինեգործության հովանավորը: Նա ուրախության, զվարթության, խենթության աստվածն է: Ըստ էության՝ Ապոլլոնն ու Դիոնիսոսը խորհրդանշում են երկնային ու երկրային սկիզբների հակադրությունը: Ժամանակի ընթացքում այս երկու աստվածները դարձել են ավելին, քան պարզապես ինչ-որ բան մարմնավորող գերբնական ուժեր՝ վերածվելով հակադիր մշակութային խորհրդանիշների, որոշակի աշխարհայացքային դիրքորոշումների պատկերավոր արտահայտության, և արդեն որպես այդպիսին՝ վճռորոշ դեր խաղացել թե՛ յուրաքանչյուր առանձին հելլենի, թե՛ ողջ հունական պոլիսի աշխարհայացքի ձևավորման գործում: Ապոլլոնը հանգստության ու կարգուկանոնի խորհրդանիշն է եղել, Դիոնիսոսը՝ դրա հակադրությունը: Եթե առաջինը չափի զգացում է, ինքնասահմանափակում, ազատություն վայրի պոռթկումներից, իմաստուն հանդարտություն, ապա երկրորդը՝ սահմաններ չճանաչող ծայրահեղություն է, չափի զգացողության լիակատար բացակայություն, պայթունավտանգ խենթություն:

Այդ երկու ուժերը միշտ հանդես են գալիս միասին, և դրանց էությունն առավել խորքային ըմբռնելու համար է միայն, որ Նիցշեն դրանք դիտարկում է իրարից անջատ՝ զուգորդելով դիոնիսոսյան սկիզբն արբեցության, իսկ ապոլլոնյանը՝ երազատեսության հետ: Նա գրում է. «Դիոնիսոսյան սկզբի մեջ ամեն առանձինը, սուբյեկտիվը վերանում են՝ ընդհուպ կատարյալ ինքնամոռացություն: Դիոնիսոսի բնական ուժերի զարթոնքը խորհրդանշող աստծո ազդեցության տակ մարդը «այո» է ասում կյանքի ցանկացած, անգամ ամենասարսափելի դրսևորման»⁷: Նիցշեն բերում է դիոնիսոսյան տոնակատարությունների պատմական բազմաթիվ վկայություններ⁸, որոնք ուղեկցվում էին սեռական ծայրահեղ ազատությամբ և դաժանության տարբեր դրսևորումներով: Սակայն նա չէր ըմբռնում դրանք որպես ինչ-որ այլասերվածության արտահայտություն, առավել ևս չէր համարում դա, այսպես կոչված, «ազգային հիվանդություն», ինչպես կարծում էին որոշ հետազոտողներ: Նիցշեի կարծիքով, հին հույները, ի տարբերություն շատ ազգերի, պաշտպանված էին այդ ամենից Ապոլլոն աստծո ուժերով, որը խորհրդանշում էր հանգստություն, ներդաշնակություն, տարվածություն պատրանքներով ու երազներով, որոնք էլ օգնում էին նրանց հաղթահարելու ամեն տեսակի փորձություն: Ապոլլոնյան սկիզբը հակադրվում է դիոնիսոսյանին մոտավորապես այնպես, ինչպես հակաբնականը բնականին՝ փորձելով սահմանափակել ամեն ծայրահեղը: Հույները հավասարապես զգում էին երկուսի անհրաժեշտությունն էլ և չէին կարող նախապատվություն տալ միայն մեկին. Ապոլլոնի բարոյական սկիզբը յուրահատուկ պաշտպանություն դարձավ նրանց համար կյանքի սարսափներ-

⁷ Նույն տեղում, էջ 70:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 79 – 83:

րից, մինչդեռ Դիոնիսոսի պաշտամունքն արտացոլում էր այն հարգանքը, որ տածում էին բնության ահռելի ուժի նկատմամբ:

Ըստ Նիցշեի՝ ցանկացած հույնի հոգու մեջ կյանքի նկատմամբ գոյություն ունեւ երկու վերաբերմունք՝ դիոնիսոսյան և ապոլլոնյան: Բնությանը մոտ լինելը, բնագոյների իշխանության տակ գտնվելը պայմանավորված էին նրանց մեջ դիոնիսոսյան տարրի առկայությամբ՝ ինչ-որ իռացիոնալ, անկառավարելի ու ողբերգական խորը մի ապրման, որն անընդհատ հիշեցնում է մարդու կենդանական ծագման մասին: Դրան հակառակ՝ ապոլլոնյան սկիզբն օգնում էր նրանց հասկանալու կյանքը մտածական կատեգորիաների միջոցով, պարզեցնում ու հանդարտեցնում էր կրքերը, լուսավոր, ներդաշնակ ու գեղեցիկ բանական պատրանքների միջոցով մոռացության մատնում ամեն տեսակ տառապանքներն ու վախերը: Կենսական այդ երկու հակադիր ուժերը, ըստ Նիցշեի, առավել ուժեղ պայքարում էին արվեստագետների մեջ, և երկուսն էլ այս կամ այն չափով միշտ առկա են ցանկացած գեղարվեստական ստեղծագործության մեջ, ընդ որում՝ «յուրաքանչյուր արվեստագետ կա՛մ ապոլլոնյան պատրանքի արվեստագետ է, կա՛մ արբեցության դիոնիսոսյան արվեստագետ է, կա՛մ, վերջապես, և՛ պատրանքի, և՛ արբեցության արվեստագետ է»⁹: Այստեղից էլ նա բխեցնում է արվեստների ծագման ու դասակարգման իր տիպաբանությունը: Ապոլլոնյան սկզբի մեջ, ըստ Նիցշեի, գերիշխում են ներդաշնակությունը, կարգուկանոնը, հանգստությունը, ինչի հետևանքով լույս աշխարհ են գալիս պլաստիկ արվեստները՝ ճարտարապետությունը, քանդակագործությունը, կերպարվեստը, գրաֆիկան: Իսկ ահա դիոնիսոսյան սկիզբը ղեկավարում են քաոսը, ինքնամոռացությունը, վայրի բնագոյները, ինչը ծնում է ոչ պլաստիկ արվեստներ, նախ և առաջ՝ երաժշտություն: Իսկ, երբ այդ երկու հակադրությունները միավորվում են, ստեղծվում են լիրիկական բանաստեղծությունները, ժողովրդական երգերը և, վերջապես, հելլենական ստեղծագործության գլուխգործոցը՝ անտիկ ողբերգությունը, որին և՛ ապոլլոնյան, և՛ դիոնիսոսյան տարրերը բնորոշ են հավասարապես: Նիցշեն պնդում է, որ հենց հունական ողբերգության մեջ են այդ երկու սկիզբները լավագույնս ձուլվել երկարատև պայքարից հետո, որով էլ հասել են իրենց դրսևորման կատարյալ ձևին:

Սակայն Նիցշեն չի բավարարվում միայն անտիկ արվեստի հոգեբանական հիմքերի ու դրա տարատեսակների վերլուծությամբ, այլ փորձում է նաև բացահայտել դրանց առաջացման ու զարգացման համար անհրաժեշտ հասարակական նախադրյալները: Նիցշեին ժամանակակից եվրոպական մշակույթի մեջ առհասարակ իշխում էին իդեալիստական պատկերացումները անտիկ Հունաստանի պետական ու

⁹ Նույն տեղում, էջ 98:

հասարակական կառուցվածքի վերաբերյալ, որտեղ վերջինս ներկայանում էր որպես ժողովրդավարության օրինակելի մի նմուշ, քանզի դրանում ստեղծված էին բոլոր մարդկանց ազատ ու ստեղծագործ կենսագործունեության լավագույն պայմանները: Նիցշեն առաջիններից մեկն էր արևմտյան փիլիսոփայության մեջ, ով շեշտադրեց այն հանգամանքը, որ անտիկ հասարակությունը միշտ բաժանված է եղել ստրուկների ու ազատների, ընդ որում՝ «հույն ազգ» հասկացության տակ հասկացվում էին հենց միայն այդ ազատ ծնվածները: «Անվիճելի է,- գրում էր նա,- որ հումանիզմն ու լուսավորականությունն իրենց հետ մարտի դաշտ են բերել անտիկ դարաշրջանը՝ որպես իրենց դաշնակցի: Միայն թե հումանիզմը վատ է ճանաչում և կեղծել է հին ժամանակները. եթե ավելի ուշադիր նայես, այդ դարաշրջանը հենց լավագույն փաստարկ է ընդդեմ հումանիզմի, իր հիմքում մարդկային բարի բնույթի և նմանատիպ այլ գաղափարների: Հումանիզմի թշնամիները սխալվում են, երբ միաժամանակ պայքարում են նաև հին ժամանակների դեմ. այն ուժեղ դաշնակից է նրանց համար»¹⁰: Դարեր շարունակ արևմտյան մտածողների համար բնորոշ էր այն, որ որպես իդեալ նրանք նկարագրում էին անտիկ հասարակության միայն մի կողմը՝ անտիկ պոլիսը, որը բաղկացած էր ազատներից, որոնց միջև ձևավորվող հարաբերություններն էլ հենց հանդես էին գալիս որպես մարդկային ճշմարիտ հարաբերությունների մոդել: Ողջ անտիկ մշակույթը կապվում էր հարաբերությունների միայն այդ համակարգի հետ, բխեցվում էր միայն դրանից: Նույնիսկ այն դեպքերում, երբ առաջանում էր կասկած, որ այդ մշակույթն ամբողջությամբ վերցրած, այդ թվում՝ նաև ազատների հարաբերությունները, կարող էր առաջանալ ու գործառել միայն ստրկատիրության հիմքի վրա և դրա առկայության շնորհիվ, հարցի այդ արձարծումից ձգտում էին վերանալ, մոռանալ դրա մասին կամ լավագույն դեպքում ենթադրել, որ ստրկատիրությունը բնորոշ էր այդ ժամանակներին ընդհանրապես, որ դա հասարակության պատմական զարգացման փուլերից մեկն էր, և հունական պետությունը չէր կարող բացառություն լինել:

Նիցշեն վերջ դրեց անտիկ հասարակության հասկացման այդ կեղծ լավատեսությանը՝ ուշադրությունը սևեռելով այն փաստի վրա, որ այդ հասարակությունը հիմնված էր ստրկատիրության վրա ոչ թե պարզապես այն պատճառով, որ դա ժամանակի հրամայականն էր. հին հույները լիովին համոզված էին, որ որևէ բնագավառում հաջողությունների ու նվաճումների հասնելու համար հարաբերություններն անտիկ հասարակության ներսում պիտի լինեին ամենևին էլ ոչ մարդասիրական: Այս դրույթը Նիցշեն առաջադրում է որպես անտիկ ժամանակաշրջանի մտածելակերպի հասկացման հիմնական ու ելակե-

¹⁰ Նույն տեղում, էջ 61:

տային, մնացյալ ամեն բան՝ ածանցյալ դրանից. «Հունական մշակույթը հենված է մի փոքրաթիվ դասի իշխանական վերաբերմունքի վրա՝ առ անազատների դասը, որը 4-5 անգամ ավելի մեծ էր քանակով. զանգվածային առումով Հունաստանն իրենից ներկայացնում էր բարբարոսներով բնակեցված երկիր: Բնչպե՞ս կարելի է հին մարդկանց համարել հումանիստ: Հանճարի և հաց վաստակելու համար աշխատող մարդու հակադրություն. հույները հավատում էին ռասաների միջև եղած տարբերությանը»¹¹: Իր այս դիտարկման մեջ, համաձայն որի՝ անտիկ հասարակությունը հենված էր ստրուկների շահագործման ու բարբարոսներին թալանելու վրա, Նիցշեն, անկասկած, իրավացի էր: Որպես պատմաբան՝ նա զգալիորեն ավելի սթափ էր ու իրատես, քան բոլոր նրանք, ովքեր պարզապես դասական անտիկ դարաշրջանի վրա տարածում էին արևմտյան մշակույթի մեջ իշխող ժողովրդավարական պատրանքներն ու իդեալները: Դրանում էր անտիկ դարաշրջանի նիցշեական մեկնաբանության արևմտական տարբերությունն այն պատկերացումներից, որոնք առաջադրվել էին արևմտյան մշակույթում՝ սկսած Վերածննդից մինչև գերմանական ռոմանտիկներ:

Այսպիսին է Նիցշեի վաղ շրջանի գեղագիտության սոցիալական ու բարոյագիտական ենթատեքստը, որն ամփոփված է «Ողբերգության ծնունդը երաժշտության ոգուց» ստեղծագործության մեջ: Դրա կորիզն այն միտքն է, որ մարդկությունը հավերժ բաժանված է երկու խմբի: «Ավելի բարձր արվեստը, - գրում է Նիցշեն, - կարող է առաջանալ միայն այնտեղ, որտեղ գոյություն ունեն երկու տարբեր հասարակական խավեր՝ աշխատողների դաս և ազատների դաս, կամ ավելի ստույգ՝ ստիպողական աշխատանքի խավ և ազատ աշխատանքի խավ... Այսպես է ասում մեզ հազիվ հասնող հին ժամանակների ձայնը, սակայն որտե՞ղ կան դեռ ականջներ, որոնք ունակ են լսելու նրան: Ավելի լավ հասարակական կառուցվածքի պարագայում ծանր աշխատանքն ու կենսական կարիքը պետք է ընկնեն նրանց վրա, ովքեր առավել քիչ են դրանից տառապում, այսինքն՝ ամենաբութ մարդկանց վրա, և դրա չափաբաժինը պետք է գնալով նվազի, մինչ հասնի նրանց, ովքեր առավել ուժեղ են զգում տառապանքի հոգևոր բարձրագույն և ամենանուրբ տեսակները և այդ պատճառով շարունակում են տանջվել նույնիսկ կյանքի մեծագույն թեթևության ժամանակ»¹²: Արդեն նրա կենդանության օրոք այս աշխատանքի շուրջ ծավալված բուռն վիճաբանությունն ակնառու ապացույցն է այն բանի, թե իրականում որքան բարդ են ինչպես պատմական, այնպես էլ փիլիսոփայական տեսանկյունից Նիցշեի կատարած հարցադրումները: Եվ չնայած դրան՝ երիտասարդ տարիներին առաջին անգամ այս համարձակ գրքում բարձրացրած խնդիրները Նիցշեին խորթ չդարձան նաև ստեղծագործության հասուն շրջանում,

¹¹ Նույն տեղում, էջ 29:

¹² Նույն տեղում, էջ 37:

ինչն էլ թույլ է տալիս այս ստեղծագործությունը համարել յուրատիպ բանալի նրա ողջ փիլիսոփայությունը և մասնավորապես բարոյագիտական հայեցակարգը բացահայտելու համար:

Նիցշեի գեղագիտական ու բարոյագիտական պատկերացումների կայն ակնհայտ է դառնում 1887 թ. լույս տեսած «Բարոյականության ծագումնաբանությունը» աշխատության մեջ, որի նախաբանում հեղինակը ձևակերպում է մի շարք հարցեր, որոնց բնույթն արդեն իսկ վկայում է բարոյականության նկատմամբ միանգամայն նոր մոտեցման մասին. նա հարցնում է՝ որտեղից են, ըստ էության, սկիզբ առնում մեր «չարն» ու «բարին», «լավն» ու «վատը», ինչպիսի՞ պայմաններում է մարդը հորինել իր համար այդ արժեքները, ինչպիսի՞ արժեք ունեն դրանք ինքնին, ի՞նչն է, առհասարակ, պատճառ դարձել նման տարանջատման անհրաժեշտության: Այսինքն՝ նա փորձում է իմաստավորել բարոյական արժեքները որպես այդպիսին: «Մեզ հարկավոր է բարոյական արժեքների քննադատություն, այդ արժեքների արժեքն ինքնին պիտի մի օր հարցականի տակ դրվի»¹³, - գրում է Նիցշեն: Նրա կարծիքով, հարկավոր է պարզել, թե արժեքների տվյալ սանդղակը կոնկրետ որ մարդկային տիպի, կյանքի որ ձևի բարօրությանն է ծառայում, այն նպաստում է արդյոք անհատի առավել ուժեղ, բացառիկ տարատեսակի ի հայտ գալուն, թե միայն օգնում է մարդկանց այս կամ այն խմբին՝ հնարավորինս երկար պահպանելու իր գոյությունը¹⁴: Մինչ այժմ, պնդում է Նիցշեն, այսպիսի գիտելիքը բացակայում էր, և դրա անհրաժեշտությունը կարծես թե առհասարակ չկար: Այդ արժեքների արժեքը միշտ ընկալվում էր որպես հեղինակություն, որպես արդեն իսկ ապացուցված փաստ: Բայց միգուցե այն, ինչ մենք անվանում ենք «բարի», իրականում «չար» է, իսկ «լավը»՝ «վատ»: Բոլոր այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է, ըստ Նիցշեի, այն պայմանների ու հանգամանքների իմացություն, որոնցից ծնվել են այդ արժեքները, որոնց մեջ դրանք փոփոխվել են, այսինքն՝ դրանց ծագման պատմության ուսումնասիրություն, ինչով էլ պիտի զբաղվի նոր գիտությունը՝ բարոյականության ծագումնաբանությունը կամ գենեոլոգիան: Գենեոլոգիան առհասարակ Նիցշեի հիմնական փիլիսոփայական մեթոդներից մեկն է, ինչպես ինքն է սահմանել՝ «բացարձակապես նոր գիտություն կամ գիտության սկիզբ», որի գլխավոր նպատակն է «նախապաշարմունքների ծագման պատմության ու արժեքների պատմական իմաստի բացահայտումը»¹⁵:

Բարոյական արժեքները, ըստ Նիցշեի, գոյություն չունեն ապրիորի ո՛չ երկնքում, ո՛չ էլ երկրի վրա: Միայն այն, ինչ կենսաբանորեն արդարացված է, բարիք ու ճշմարիտ օրենք է մարդու համար: Ավելին, ա-

¹³ Nietzsche F. Saemtliche Werke in zwoelf Banden, Band 3, Stuttgart, 1965, s. 324.

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 340:

¹⁵ Նույն տեղում, էջ 297:

մեն մարդ ունի այնպիսի բարոյականություն, որին առավել շատ է համապատասխանում նրա էությունը: Այս դրույթից էլ նա բխեցնում է բարոյական պատկերացումների ծագման ու զարգացման իր պատմությունը: Նիցշեն տարբերում է բարոյականության երկու տիպ՝ տերերի (ուժեղ մարդկանց), և նրանց հաղթանակած ստրուկների (որոնք հաղթել են ոչ թե ուժի, այլ քանակի շնորհիվ): Նա գրում է. «Ճամփորդելով նրբանկատ ու բիրտ բարոյականությունների շատ ոլորտներում, որոնք մինչ այս գերիշխել են կամ դեռ գերիշխում են երկրի վրա, ես մշտապես բախվում էի նույն որոշակի հատկանիշների կրկնության և փոխադարձ կապի հետ, երբ վերջապես իմ առջև երևացին դրանց երկու հիմնական տիպ և նրանց միջև մեկ հիմնական տարբերություն: Կան տերերի բարոյականություն և ստրուկների բարոյականություն, շտապում եմ ավելացնել, որ բոլոր բարձրագույն ու խառը մշակույթներում մենք տեսնում ենք նաև փորձեր՝ համաձայնեցնելու այդ երկու բարոյականությունները, էլ ավելի հաճախ տեսնում ենք, որ դրանք միահյուսվում են փոխադարձաբար չհասկանալով մեկը մյուսին, երբեմն էլ համառորեն առկա են կողք կողքի՝ նույնիսկ միևնույն մարդու մեջ, մեկ հոգու մեջ»¹⁶: Այստեղից միանշանակ բխում է, որ տերերի ու ստրուկների բարոյականության Նիցշեի առանձնացումը կրում է գլխավորապես տիպաբանական բնույթ և միայն մասնակիորեն՝ պատմական: Եթե ավելի հստակ լինենք, Նիցշեն չի սահմանափակում «տերերի» ու «ստրուկների» բարոյականության վերլուծությունը միայն սոցիալական սահմաններով. նրա համար այդ երկու հակադիր բարոյականությունները բնորոշում են նախ և առաջ այն, ինչն ինքն անվանում է «հոգևոր բնություն», թեպետ, ըստ նրա, մարդկության պատմական զարգացման վաղ փուլերում այս տարանջատումը ճիշտ է հենց դասային առումով:

Նիցշեն այդ երկու բարոյականությունները տարբերում է դրանց բնորոշ մի շարք առանձնահատկությունների հիման վրա.

- ազնվական արժեքների առաջացման համար նախադրյալ են մարմնի ուժը, ծաղկող, ավերից դուրս եկող առողջությունը, ազատ և ուրախ ակտիվությունը: Իսկ ստրկականը, որը նա երբեմն անվանում է նաև քրմական, բնութագրվում է վատառողջությամբ՝ ֆիզիկական ու հոգևոր առումներով, կյանքից հիասթափվածությամբ, որի հաղթահարման փորձ է արվում ինչ-որ բանի հավատալով (օրինակ՝ աստծուն),

- եթե ցանկացած ազնվական բարոյականություն «այդ» է ասում կյանքին՝ դրա ցանկացած, անգամ ամենավատ ու սարսափելի դրսևորումներով հանդերձ, ապա ստրուկների բարոյականությունը «ոչ» է ասում այն ամենին, ինչն իր համեմատությամբ այլ է՝ նույնիսկ ամենալավ ու բարձրագույն երևույթներին: Նա նշում է, որ ազնվական մարդը լի է վստահությամբ ու անկեղծությամբ ամեն ինչի, բոլորի ու ինքն իր

¹⁶ Նույն տեղում, էջ 307:

հանդեպ: Ընդհակառակը, անկարող մարդը կասկածով ու թերահավատությամբ է նայում անգամ ամենաանկեղծ ու պարզ բաներին, նա գուրկ է ցանկացած շիտակությունից, միամտությունից ու ազնվությունից նույնիսկ ինքն իր հանդեպ,

• զարգանալու համար ստրուկների բարոյականությունը միշտ կարիք ունի արտաքին գրգռիչների գոյության, իսկ տերերի բարոյականությունը բխում է հենց իրենցից. ազնվականն ինքն իր միջից է արարում ցանկացած արժեք, այդ թվում՝ և բարոյական կանոններ, իսկ ստրուկների բարոյականությունը կողմնորոշվում է ուրիշի միջոցով, այն ինքնահրացվում է ժխտման միջոցով: Այս տեսանկյունից տերերի բարոյականությունը ակտիվ, նախաձեռնող է, ստրուկների բարոյականությունը՝ պասիվ ու արձագանքող: Նիցշեն պնդում է, որ «ինքն իրեն դիմելու փոխարեն»՝ «ստրուկների բարոյականությունն իր առաջացման համար միշտ կարիք ունի, նախ և առաջ, հակադրվողի ու արտաքին աշխարհի, ֆիզիոլոգիայի լեզվով ասած՝ արտաքին գրգռիչների առկայության, որպեսզի առհասարակ գործի. դրա նկատմամբ ակցիան իր հիմքում ռեակցիա է: Եվ ընդհակառակը, հերքվող տերերի բարոյականությունը ծագում, աճում է ցնծացող ինքնահաստատումից, այն կամայական է և փնտրում է հակառակորդներ միայն այն բանի համար, որ է՛լ ավելի մեծ երախտագիտությամբ, է՛լ ավելի մեծ ցնծությամբ հաստատի ինքն իրեն»¹⁷:

Այս ամենի հետևանքով էլ ժամանակի ընթացքում ստրուկների մեջ առաջանում է, այսպես կոչված, ռեսսենտիմենտի հոգեբանական վիճակ: «Ressentiment» հասկացությունը (ֆր.՝ վրեժխնդրություն), որն այսօր դարձել է բարոյագիտության, մասնակիորեն նաև սոցիալական փիլիսոփայության կատեգորիա, ներմուծել է հենց Նիցշեն: Ինքը՝ փիլիսոփան, նախընտրել է օգտագործել այն առանց թարգմանության. ավելին՝ նրա թեթև ձեռքով այս բառն առանց թարգմանության ֆրանսերենից անցավ գերմաներենին, իսկ հետո՝ եվրոպական այլ լեզուների՝ ստանալով լայն տարածում տարբեր երկրների մտածողների շրջանում: Այն հարցին, թե ինչու Նիցշեի բազմաթիվ հետևորդներից գոնե մեկը չփորձեց գտնել այս բառի համարժեքը, ասենք, թեկուզ գերմաներենում, փորձել է պատասխանել Մաքս Շելերը, ով մի ողջ աշխատություն է նվիրել ռեսսենտիմենտի խնդրի վերլուծությանը. «Մենք օգտագործում ենք «Ressentiment» բառը ոչ թե այն պատճառով, որ հատուկ նախապատվություն ենք տալիս ֆրանսերենին, այլ այն պատճառով, որ չենք կարողանում ճշգրիտ թարգմանել այն գերմաներեն»¹⁸: Թեպետ ի սկզբանե նաև ֆրանսերենում «ռեսսենտիմենտ» հասկացությունը չէր պարունակում բովանդակային այն խորությունը, որով հետագայում այն հարստացրեց գերմանացի փիլիսոփան: Ինչնիցե, այսօր ողջ աշ-

¹⁷ Նույն տեղում, էջ 378:

¹⁸ Scheler M. Das Ressentiment im Aufbau der Moralen, Berlin, 2004, s. 19.

խարհին ընթերցում է այդ բառն ըստ Նիցշեի սահմանման:

Նիցշեն տարբերակում է ռեսսենտիմենտի երկու տիպ.

1. վրեժ, որն ուղղված է սեփական անձին. այստեղ խոսքը ռեսսենտիմենտի ներուժն ինքն իր վրա շուռ տալու մասին, ինչի ամենաակնառու դրսևորումն է ճգնավորությունը,

2. վրեժ, որն ուղղված է ուրիշի/ուրիշների դեմ, այսինքն՝ ուրիշն է մեղավոր, որ «դու այն ես, ինչ ես չեմ, որ ես այն չեմ, ինչ դու ես, որ ես դու չեմ»¹⁹: Ընդ որում՝ ուրիշի Դու-ի գոյությունը գնահատվում է որպես ինչ-որ ճակատագրական անարդարություն սեփական Ես-ի հանդեպ: Սրա տիպական դրսևորումն է «ստրուկների ապստամբությունը բարոյականության մեջ»:

Ինչպես «Բարոյականության ծագումնաբանությունը» գրքում, որտեղ ռեսսենտիմենտն ունի մեթոդաբանական նշանակություն, այնպես էլ Նիցշեի հետագա ողջ ստեղծագործության մեջ այն դիտվում է որպես պատմական և հոգեբանական բարդ հիմնախնդիր: Իր ձևավորման սկզբնական փուլում այն հոգեբանական ինքնաթունավորում է, որը դրսևորվում է թաքնված ատելության, քինախնդրության ու նախանձի, հոգևոր ճնշվածության տեսքով: Սակայն առանձին-առանձին վերցրած՝ այդ գործոնները դեռ բուն ռեսսենտիմենտ չեն ծնում. դրա վերջնական կայացման համար անհրաժեշտ է անկարողության զգացողության առկայություն: Քանի որ թվարկված ապրումները, որպես կանոն, արտաքին պայքարի ձևով չեն դրսևորվում, այլ սանձահարվում են վախի և թույլ կամքի կողմից, առաջանում է անկարողության չափազանց ցավոտ զգացողություն, որն էլ իր հերթին ուղղվում է դեպի ներս՝ ծնելով վրեժխնդրության ցանկության հոգեբանական վիճակների մի ողջ բարդ ամբողջություն, որը, սակայն, որևէ կերպ չի կարող «հաղթել» իրեն ծնող երևույթներին: Սրա պատճառով էլ ռեսսենտիմենտի ատելության սկզբնական կողմնորոշվածությունը, կենտրոնացվածությունը իր առաջացման պատճառ հանդիսացող մարդկանց նկատմամբ աստիճանաբար կորչում են, ավելին՝ ռեսսենտիմենտն առավել շատ ու լավ դրսևորվում է հենց այն վրեժի մեջ, որն առավել քիչ է ուղղված որևէ կոնկրետ օբյեկտի: Այսպիսով, ռեսսենտիմենտը ծնում է ատելության մաքուր գաղափար, այլ կերպ ասած՝ այն կրող մարդը թշնամանում է ոչ այնքան ազնվական արժեքների կոնկրետ կրողների, որքան այս վերջիններիս միջոցով ու պատճառով՝ բուն արժեքների դեմ: Նիցշեի փիլիսոփայության մեջ ռեսսենտիմենտը հանդես է գալիս որպես ստրուկների բարոյական արժեքների առաջացման ու համակարգման գործընթացում գլխավոր շարժիչ ուժ: Ի վիճակի չլինելով բացահայտ պայքարելու տերերի դեմ՝ ստրուկները հոգևոր ռևանշ են վերցնում իրենց թշնամիների նկատմամբ՝ վերաարժևորելով մինչ այդ գոյություն

¹⁹ Nietzsche F. Saemtliche Werke in zwoelf Banden, 1965, s. 391.

ունեցած ազնվական արժեքները: Ուժեղը, ազնվականը սկսում են կոչվել չար ու վատ, իսկ թույլերն ու թշվառները՝ բարի ու լավ: Միայն նրանց է հասու երջանկությունն ու երանությունը, ովքեր ի գորու են դրան ձգտելու տառապանքների միջոցով: Այսպես, ատելության ու վրեժի ծարավի հիմքի վրա տեղի է ունենում, Նիցշեի խոսքերով ասած, «ստրուկների ապստամբությունը բարոյականության» մեջ, քանի որ արդեն ռեսսենտիմենտն ինքն է դառնում արարող և ծնում նոր արժեքներ: Այս ապստամբության հաղթանակի պատճառով տեղի է ունենում իր նախադեպը չունեցող հոգևոր շրջապտույտ. նախկին՝ կյանքն իր ողջ լավ ու վատ բազմազանությամբ գովերգող անտիկ արժեքներն իրենց տեղը զիջում են բարոյական Աստծուն, չարի ու բարու մասին ստրկական սահմանափակ պատկերացումներին: Այդ պահից սկսած՝ փրկության միակ ելքը հռչակվում է հնազանդությունն այդ Աստծուն, հոգուտ որի մարդը հրաժարվում է սեփական կամքից: Անտիկ շրջանի բազմակողմանի հարուստ մարդու տեղը զբաղեցնում է մի սուբյեկտ, որի կարևորագույն հատկանիշն է համարվում բարոյական ինքնագիտակցությամբ օժտված լինելը: Այսպիսով, ռեսսենտիմենտի ստրկական միջոցները մարդուն վերածում են հոտային, հիվանդ ու կամագուրկ էակի: Հենց այսպես էլ անփոփոխ, ըստ Նիցշեի, մենք գոյություն ունենք վերջին 25 դարերի ընթացքում, երբ տիրապետող դարձան ստրուկների բարոյական արժեքները:

Անփոփելիով պետք է փաստել, որ դեռևս իր փիլիսոփայական որոնումների վաղ փուլում առաջադրած գաղափարներն ու բարձրացած հիմնահարցերը Նիցշեն շարունակել է զարգացնել ու դրանց հիմքի վրա միանգամայն նոր բացահայտումներ անել նաև ստեղծագործության հետագա փուլերում: Մասնավորապես, ակնհայտ է, որ հենց հին հունական արվեստի ու մշակույթի, դրանց ծագման ու կայացման նախադրյալների վերաբերյալ նրա վաղ շրջանի գեղագիտական բացահայտումներն են հետագայում նրան բերել բարոյագիտական հարթություն՝ հիմք դառնալով բարոյականության, ինչպես նաև ողջ եվրոպական մշակույթի վերաարժևորման համար:

Բանալի բառեր – Նիցշե, գեղագիտություն, բարոյագիտություն, ապոլլոնյան և դիոնիսոսյան սկիզբներ, անտիկ մշակույթ, գենեոլոգիա, տերերի բարոյականություն և ստրուկների բարոյականություն, ռեսսենտիմենտ

МИЛЕНА МЕСРОПЯН – Проблема взаимоотношения эстетического и этического в философии Фридриха Ницше. – Статья посвящена ранним эстетическим воззрениям Ницше и их влиянию на его дальнейшие философские поиски, в частности, на формирование более поздних этических взглядов. Особое внимание уделено анализу представлений Ницше об общественных предпосылках возникновения древнегреческого искусства, поскольку именно они легли в основу теории немецкого философа о морали рабов и морали господ. Эти же представления обусловили введённое им понятие ressentimentа.

Ключевые слова: *этика, эстетика, аполлоническое и дионисическое начала, античная культура, генеология, мораль господ и мораль рабов, ressentiment*

MILENA MESROPYAN – *The Problem of Interrelations of the Aesthetical and the Ethical in Friedrich Nietzsche's Philosophy.* – The article considers the aesthetic views of the 19th-century German philosopher Friedrich Nietzsche at an early stage of his work and the influence of the latter on his further philosophical searches, in particular on the formation of ethical attitudes in the late period of his work. Special attention is paid to the analysis of Nietzsche's ideas about the social contexts of the rise of ancient Greek art, as they later formed the basis of his ethical theory about master morality and slave morality, as well as the basis for his discovery of resentment phenomena in world history.

Key words: *Nietzsche, aesthetics, ethics, Apollonian and Dionysian beginnings, ancient culture, genealogy, master morality and slave morality, resentment*

ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ПРИМЕНЕНИЯ ПРОЕКТИВНЫХ МЕТОДОВ В ЭКСПЕРИМЕНТАЛЬНЫХ ИССЛЕДОВАНИЯХ

ГРАНТ АВАНЕСЯН

Сегодня по-прежнему постоянно возникают вопросы о теоретических, методологических основах проективной психологии, о её концептуальных принципах. Дискуссионными остаются проблемы, связанные с тенденциями развития методов проективной психодиагностики, с их соответствием требованиям экспериментальной психологии, с возможностью их использования вкупе с традиционными стандартизированными психодиагностическими методиками, а также с исследовательскими и диагностическими возможностями проективных методов. Развитие психологической науки сопровождалось появлением столь феерических (взрывных, грандиозных, уникальных) идей и открытий, что их можно было бы охарактеризовать как перевороты и триумфы. И если переворот ассоциируется с именем З. Фрейда, то триумф – с именем Г. Роршаха, разработавшего проективный метод интерпретации “чернильных пятен”¹.

Наиболее подробно теоретический анализ основ проективной психологии представлен в сборниках Л. Эбта, Л. Беллака и Б. Мурстейна², переведённые варианты которых опубликованы на русском языке. К сожалению, основательные и подробно проанализированные работы по проективной психологии и её методам на армянском языке в настоящее время отсутствуют. Это затрудняет применение подобных методов как в исследовательской, так и в практической работе армянских психологов. Затруднения связаны, во-первых, с недостаточным теоретическим обоснованием проективных методов, с изъянами в техниках интерпретации проективного тестирования из-за сложности самих техник, требующих высокого профессионализма для выявления сознательных и бессознательных процессов. Психолог-диагност должен обладать интуицией для оценки “завуали-

¹ Герман Роршах (1884–1922) – швейцарский психиатр и психолог, автор теста исследования личности «Пятна Роршаха» (Psychodiagnostik. In W. Morgenthaler (ed.). *Arbeiten zur angewandten Psychiatrie*. vol. 2, Bircher. 1921). Ввёл в оборот термин «психодиагностика». Классикой стали книга Г. Роршаха "Психодиагностика" и его доклад "Об интерпретации эксперимента по истолкованию форм" // <http://psychojournal.ru/psychologists/381-german-rorshah.html#t20c>.

² См. **Abt L., Bellak L.** Projective Psychology. N. Y., 1950.; Handbook of Projective Techniques, Ed. B. Murstein. Published by Basic Books, 1965.

рованных” сигналов о психическом состоянии, а также страхов, желаний, побуждений, внутренних конфликтов, системы смыслов и особенностей когнитивного стиля личности. Перечисленные нюансы, осложняющие ситуацию, универсальны и характерны для проективного подхода в психодиагностике. Кроме того, при интерпретации результатов тестирования необходимо учитывать национальный менталитет тестируемых, их самосознание, этнические стереотипы, характер языковых единиц и т.п. Всё это, возможно, указывает на постановку вопроса об адаптации проективных методик, хотя и не в столь жёсткой форме, как при использовании более традиционных методов психологической диагностики (опросники, тесты). Более того, в большинстве случаев преимуществом проективного тестирования можно считать то, что оно позволяет преодолеть проблему адекватного перевода терминов и сопоставления результатов исследования в разных языковых группах. Однако вопрос адекватного перевода терминологического тезауруса в проективной психологии остаётся открытым.

К методологическим проблемам становления проективных техник диагностики относятся особенности психодинамической перспективы, которая обусловлена широким спектром затрагиваемых вопросов, связанных с видами реагирования, нормированием и языком. В целом все сводится к качественной методологии исследований, которая позволяет раскрыть субъективные причины как познавательной деятельности, так и поведения³. В иной интерпретации методологических аспектов проективной психологии она противопоставляется бихевиоральной концепции и рассматривается как мятеж против основных течений теоретической психологии, которым она в действительности так сильно обязана. “Проективный взгляд в психологии резко противостоит американской бихевиоральной традиции, до сих пор являющейся таким богатым источником насыщения современной теоретической психологии”⁴. Противопоставляя подходы психоаналитиков и психиатров, автор приходит к выводу, что все это в значительной степени способствовало продвижению в направлении экспериментальной психопатологии. Анализируя проективные методы, автор приходит к выводу об отказе от разграничения количественных и качественных данных, так как при изучении личности возникают оба вида данных, и необходимо разработать универсальные способы их трактовки. Следует заметить, что проекция имеет и влияющую функцию: так называемое символическое преобразование сознания, смысловое и эмоциональное воздействие, техники которого имеют особое значение в прикладной психологии и широко используются в политическом дискурсе, рекламе, PR, при отборе персонала (HRM) и в имиджологии. Однако это – предмет отдельного исследования.

³ См. **Molish Н. В.** Projective Methodologies//Annual Review of Psychology, 1972, Vol. 23: 577-614.

⁴ **Беллак Л., Эбт Л.** Проективная психология. М., 2010, с. 30.

